

ԹՈՒՐՔԻԱ ԿՐ ՊԱՅԱՆՁԷ ՓԱԿԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԹՈՍԱԿԱՅԱՆԸ

Պաշտօնական Անգարան կը պահանջէ անյապաղ դադարեցնել Մեծամորի աթոռակայանի աշխատանքը՝ պնդելով, թէ այն սպառնալիք է ամբողջ տարածաշրջանի համար: Այս մասին արտայայտուած է Թուրքիոյ ուժանիւթի նախարար Թաներ Երլարզ:

Թուրք նախարարը չի շեղուցած է, որ հայկական աթոռակայանը կը գործէ աւելի քան 40 տարի է ի վեր, եւ ընդգծած է, որ մեծ վտանգ կը ներկայացնեն յատկապէս «Հին» կայանները:

Մեծամորի աթոռակայանին շուրջ Թրքական լրատուամիջոցներուն մէջ քննարկումները սկսած էին, երբ վերջերս Հայաստան որոշած էր 10 տարիով եւս երկարաձգել միջուկային կայանի աշխատանքը՝ մինչեւ 2023 թուականը:

Թրքական մամուլը նաեւ կը չի շեղնէ, որ նախարար Թաներ Երլարզ տակաւին անցեալ տարուայ Հոկտեմբերին՝ Վանի մէջ արձանագրուած երկրաշարժէն յետոյ, յանձնարարած էր երկրի՝ միջուկային հարցերով զբաղուող մասնագէտներուն չափել ռատիոակտիւութեան աստիճանը Թուրքիոյ արեւելեան շրջաններուն մէջ, մտավարտութիւն ունենալով յատկապէս Մեծամորի աթոռակայանի հարաւոր արտահոսքէն:

ԲԱՑԱՌԻԿ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿՈՒԵՑԱԻ Ս.Դ.Հ.Կ.Ի 125 ԱՄԵԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ



Գիտաժողովին մասնակցող դասախօսներն ու գիտնականները

Մեր գաղութի պատմութեան մէջ չի շարժան եւ անմոռանալի թուական մը պիտի մնայ 27 Հոկտեմբեր, 2012ը, քանի որ այդ օր տեղի ունեցաւ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան 125 ամեակին նուիրուած գիտաժողով մը (սեմինար) Պրոպէնքի Ուիտպըրի Համալսարանի «Ֆլէշըր ձոնգ» հանդիսասարահին մէջ, առաւօտեան ժամը 9-էն մինչեւ կ.ե. ժամը 5:

Արդարեւ, գիտաժողովի կազմակերպիչները (Նոր Սերունդ Մշակութային Միութիւն եւ Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւն), ոչ մէկ ճիգ չէին խնայած ակադեմական ամենաբարձր մակարդակով նշելու այս պատմական եզակի իրադրութիւնը:

Սեմինարի մասնակիցները շուրջ 200 հոգի նախասրահին մէջ ցուցադրուած ցուցանակներու միջոցով ծանօթացան ՍԴՀԿ-ի տարբեր ժամանակաշրջաններու, գործունէութեանց, լուսանկարներուն եւ այլ ծանօթագրութեանց:

Սեմինարի կազմակերպիչ յանձնախումբ անունով ելոյթ ունեցաւ Նոր Սերունդ Մշակութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան եւ նախքան իր բացման խօսքը՝ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգանքի տուրք մատուցանել ի

125 ամեակի Գիտաժողովին նուիրուած բարձրորակ խնամքով պատրաստուած յայտագիր գրքոյկ մը բաժնուեցաւ հանդիսականներուն:

Սրահէն ներս իրենց ներկայութեամբ աչքի կը զարնէին Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Յովնան Արք. Տէրաթեան, Հայ Աւետ. Եկեղեցիներու տնօրէն վեր. Ճօ Մաթոսեան, Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեան եւ իր խորհրդականը՝ Արտակ Գալստեան, Արեւմտեան Թեմի նախկին առաջնորդ Գեր. Վաչէ Արք. Յովսէփեան, Սան Տիեկոյի Հայց. Եկեղեցւոյ հովիւ Արժ. Տ. Տաթև Ա. Քհնյ. Թաթուլեան, Հարաւային Գալիֆորնիոյ համալսարաններու դասախօսներ, Ս.Դ.Հ.Կ.ի ղեկավարեր, ինչպէս նաեւ տարբեր կազմակերպութեանց, մամուլի եւ մտաւորականութեան ներկայացուցիչներ:

Սեմինարի կազմակերպիչ յանձնախումբ անունով ելոյթ ունեցաւ Նոր Սերունդ Մշակութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան եւ նախքան իր բացման խօսքը՝ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգանքի տուրք մատուցանել ի


Շաբ.ը էջ 21

ՀԱՍԱՆ ԳԻՐՔԸ ԱՄԵՆԵՆ ՇԱՏ ՎԱՃԱՌՈՒԱԾՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ

Թուրք հանրաձանօթ լրագրող Հասան Ճեմալի՝ Հայոց Յեղապանութեան մասին հրատարակած գիրքը Թուրքիոյ մէջ դասուած է ամենէն շատ վաճառուած գիրքերու ցանկին վրայ:

Թրքական «Չաման» թերթի համաձայն, այս գիրքին մէջ ոչ միայն կը ներկայացուին փաստագրական տուեալներ, այլ կը պատմուի, թէ ինչպէս հեղինակին անձնական փորձերը փոխուած են եւ ան մերժումէն անցած է ճանաչումի: Գիրքին մէջ նաեւ բացայայտուած են Ճեմալ Փաշայի յուշերը, որոնց մէջ ան ռուսական կողմը կ'ամբաստանէ՝ հայերուն եւ թուրքերուն միջեւ թշնամութիւն հրահրելու յանցանքով:

Թերթը կը չի շեղնէ, որ աղմկայարուց այս գիրքի հեղինակը երիտասարդ Թուրքերու կառավարութեան առանցքային դէմքերից




մէկուն՝ Չեմալ փաշայի թոռն է: Գիրքը կը սկսի մօտ 30 տարի առաջ հեղինակի հրապարակած առաջին յօդուածով, ուր ան կը

Շաբ.ը էջ 5

ՀԱԼԵՊԻ Ս. ԳԵՌՈՂ ԵԿԵՂԵՑԻՆ ՀՐԿԻՉՈՒԱԾ Է ՀԱՅ ԱՌԵԻԱՆԳԵԱԼՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԷՉ

Հալէպէն համող տեղեկութիւններու համաձայն Պէյրութէն Հալէպ ուղղուող փոխադրականքը խոչընդոտուած է Հալէպ համելէ մօտ 20 վայրկեան առաջ, Սարաքէպ շրջանին մէջ: Դիմակաւորներ առեւանգած են ճամբորդ տղամարդոց, զանոնք տեղադրած են վէնի մը մէջ եւ հեռացած՝ անորոշ ուղղութեամբ: Առեւանգուած են առնուազն 10 երիտասարդներ, որոնցմէ 7-ն հայեր են: Լեւոն Չէյթլունեան, Արսէն Արոյեան, Կարօ Փամփալեան եւ հայր ու որդի Պաշար եւ ճորճ Ռապայթներ կը գտնուին առեւանգեալներու շարքին: Մնացեալ հայերուն անունները ցարդ չեն բացայայտուած: Առեւանգեալ երիտասարդներէն ոմանց կ'ընկերակցէին իրենց կիները եւ զաւակները, որոնք ազատ ձգուած են:

Կարգ մը տեղեկութիւններու համաձայն, առեւանգողները կը



Հալէպի Ս. Գեորգ եկեղեցւոյ հրկիզուած խորանը

պահանջեն իրենց 150 ընկերներուն ազատ արձակումը՝ սուրիական պե-

Շաբ.ը էջ 5

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

125-ԱՄԵԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ ՆՈՑԵՄԲԵՐ 18, 2012 ԵՐԱԿՈՑԵԱՆ ԺԱՄԸ 5.00-ԻՆ

GLENDALE HIGH SCHOOL AUDITORIUM

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ




ՊԱՏԵՐԱԶՄԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

«ԻԶՅՈՒՄ»

ՅԱԿՈՒԲԱՂԱԼԵԱՆ

Արուեստի մի շարք երիտասարդ ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում, Սերժ Սարգսեանն արեց մի բաւական ուշադրաւ յայտարարութիւն, իրեն ուղղուած հարցերից մէկին պատասխանելիս: Սարգսեանը խօսում էր այն մասին, որ իհարկէ շատ ու շատ են այլ ոլորտներում ծախսերի անհրաժեշտութիւնները, բայց Հայաստանը պարտադրուած է ունենալ խոշոր բանակ եւ շատ փող յատկացնել այն պահելու համար: Սարգսեանը յայտարարեց, որ երբ իրավիճակը սրւում է, ապա բոլորը ձգուում են եւ մտածում անվտանգութեան մասին, իսկ երբ լարուածութիւնն իջնում է, ապա անցնում են կենցաղային հարցերին: Սարգսեանը դա բնական է համարում, սակայն նաեւ շեշտում է, թէ սրուի իրավիճակը, ապա վտաս է, որ բոլորի համար կարեւոր է լինելու անվտանգութիւնը, ոչ թէ աշխատավարձի մեծութիւնը:

Սա յատկանշական յայտարարութիւն է, յատկապէս նախագահի ընտրութեանն ընդառաջ, եւ նաեւ նկատի ունենալով, թէ խնդիրների ինչ պաշարով է Հայաստանը գնում դէպի այդ ընտրութիւն: Հայաստանը նախագահի ընտրութեան է գնում սոցիալական շատ մեծ լարուածութեամբ, տնտեսական բաւական բարդ իրավիճակով: Ակնյայտ է, որ այս հարցում Սերժ Սարգսեանը գտնուում է իր հնարաւոր մրցակիցներին անհամեմատ առաւել խոցելի վիճակում:

Եթէ նրա մրցակիցներին յաջողուեց ընտրարշաւի շեշտը դնել սոցիալ-տնտեսական կացութեան վրայ, ապա Սարգսեանն այստեղ կարող է կանգնել լուրջ բարդութիւնների առաջ, որքան էլ կառավարութեան սոցիալ-պոպուլիստական որոշումներով փորձարուի բաւարարել տարբեր խաւերի:

Փաստացի, երիտասարդների հետ հանդիպմանը Սերժ Սարգսեանն ակնարկում է սոցիալականի «այլընտրանքի» մասին՝ անվտանգութիւն, երբ բոլորը կը մոռանան աշխատավարձերի մասին:

Անվտանգութիւնը թերեւս Սերժ Սարգսեանի միակ «կրեդոն» է, որ կարող է նրա համար ապահովել գրեթէ անպարտելի նախընտրական պայմաններ, յետին պլան մղելով սոցիալ-տնտեսական օրակարգը: Իհարկէ, այստեղ էականն այն է, որ անվտանգութեան հարցը նրա համար լինի միանգամայն վերահսկելի, քանի որ հակառակ պարագայում Սերժ Սարգսեանը կարող է լինել օրակարգային տրանսֆորմացիայի առաջին «գոհը»:

Կասկածից վեր է, որ Հայաստանում անվտանգութեան հարց սրելը չի պահանջում ահռելի ջանքեր: Սահմանային մի փոքր սադրանքով եւ դրա տեղեկատուական ապահովման շնորհիւ հնարաւոր է անվտանգութեան խնդիրը բերել առաջնային պլան եւ դրա վրայ կառուցել ու կառավարել նախընտրական իրավիճակը: Ամենայն հաւանականութեամբ, դա կը լինի

Սարգսեանի «նախընտրական գէնքը», եթէ տակտիկական այլ մշակումների շնորհիւ հնարաւոր չլինի ապահովել իրավիճակի «յաղթական» վերահսկելիութիւն:

Այստեղ իհարկէ Սարգսեանին անհրաժեշտ կը լինի արտաքին աջակցութիւն: Ղարաբաղի հակամարտութեան միջնորդները թերեւս պէտք է ստանան այդ իրավիճակի «երաշխաւորի» դերը, որովհետեւ առանց դրա, Սերժ Սարգսեանը կարող է ի վիճակի չլինել վերահսկել իրադարձութիւնների զարգացումը, եւ այն կարող է ներքաղաքական հնարքի փոխարէն վերածուել գլոբալ սադրանքի:

Դատելով այն հանգամանքից, որ միջազգային հանրութիւնը կարծես թէ երբեք էլ առանձնապէս դէմ չի եղել, որ Հայաստանում իշխանութիւնն իր համար ծանր իրավիճակներում պարբերաբար շրջանառի դարաբաղեան ուղղութեամբ լարուածութեան թեման, պէտք է թերեւս ենթադրել, որ դէմ չի լինի նաեւ այս անգամ, առաւել եւս, եթէ խնդիրը Հայաստանում քառտիկ զարգացումների հաւանականութիւնը գապելն է: Իսկ զարգացումները կարող են հենց այդպիսին էլ լինել, քանի որ Հայաստանում բաւական լողողած ու անորոշ է այսպէս ասած Սերժ Սարգսեանի մրցակիցների դաշտը, եւ այնտեղ նոյնիսկ գործակցութեան միտումների պարագայում կողմերն այդուհանդերձ միմիանց հետ պակաս խնդիրներ չունեն, քան Սարգսեանի հետ:

Քառտիկ զարգացումների հաւանականութիւնը մեծ է առաւել եւս այն դէպքում, երբ այդ ամենում հանրութեան դերը հասցուած է նուազագոյնի, կամ գրեթէ զրոյի, եւ հասարակութիւնը գրեթէ ազդեցութիւն չունի քաղաքական գործընթացների մասնակիցների վրայ:

Տուեալ պարագայում, հանրութեան դերն իհարկէ կարեւոր է ոչ միայն այդ ազդեցութեան իմաստով: Բանն այն է, որ Հայաստանի հասարակութիւնը կարծես թէ ունի անվտանգութեան ներքաղաքական բաղադրիչի հանդէպ յստակ ձեւակերպուած մօտեցումների անհրաժեշտութիւն՝ բանաձեւեր, որոնք «անվտանգութեան» բաղադրիչի խաղարկման դէպքում հանրային արձագանքի կամ վերաբերմունքի ելակետ, բազա են եւ հասարակութեանը կ'օգնեն թեման եւ ինքզինքը գերծ պահել տարբեր մանիպուլիացիաներից, եւ այն կարեւոր բաղադրիչը չդարձնել հանրային ու պետական զարգացման ճանապարհի առանցքային խոչընդոտներից, գործող համակարգի շարունակական վերարտադրութեան վերջին, բայց յուսալի հանգրուաններից մէկը:

Ըստ երեւոյթի, այդ հարցը Հայաստանի համար վաղուց դարձել է արդիական, եւ հանրային-քաղաքական քննարկումների օրակարգում այն թերեւս պէտք է դառնայ առանցքային կէտերից մէկը, հանրութեանը համարժէքութեան ելակէտերի բերելու համար:

«ԼՐԱԳԻՐ»

ԻՍԿԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԸ

ՄԱՐԻՆԱ ԲԱՂՂԱԳՅՈՒԼԵԱՆ

Թերեւս ոչ մի տեղ այնպէս խորիտ ու յաղթական չի հնչում «Երիտասարդները մեր ապագան են» կարգախօսը, որքան մեր երկրում: Դժուար գտնուի մէկ այլ տարածականութիւն, ուր որդիները հայրերի գաղափարներն են իրականացնում, եթէ, իհարկէ, եղածը կարելի է գաղափար կոչել: Խօսքը հայկական քաղաքականութեան ֆենոմենի մասին է, ուր երիտասարդները վերջին վազոնի տեսքով կցուած են ժանգոտած լոկոմոտիվին: Սա վերջին շնան է նրանց, ովքեր մտադիր են մասնաբաժին ունենալ քաղաքական փաթեթում եւ, բնական է, որ այնտեղ բաժնեմաս կարող է ունենալ երիտասարդութեան գաղափարագուրկ տարրը: Հակառակ դէպքում, չէր յայտնուի ոչ մի տեղ չգնացող, լուռած եւ մաշուած գնացքում:

Բնաւ զարմանալի չէ, թէ ինչու եւ ոչ մի երիտասարդ առայժմ յայտ չի ներկայացրել մտնել նախագահական մրցապայքարի մէջ, այն դէպքում, երբ Սահմանադրութիւնը 35 տարեկանից արտօնում է թեկնածութիւն առաջադրել

Երիտասարդների հարցերը լուծուած են դեռեւս ԲՈՒՀ-երում: Եւ բնաւ էլ զարմանալի չէ, թէ ինչու եւ ոչ մի երիտասարդ առայժմ յայտ չի ներկայացրել մտնել նախագահական մրցապայքարի մէջ, այն դէպքում, երբ Սահմանադրութիւնը 35 տարեկանից արտօնում է թեկնածութիւն առաջադրել:

Նոր ցանցային աշխարհի տրամաբանութիւնը յուշում է, որ նախորդ դարի գաղափարախօսութիւնները դատապարտուած են այլեւս, եւ Հայաստանը պէտք է առաջադրի արդիականացման նոր նախագիծ, որը հնարաւորութիւն կը տայ մաս կազմել աշխարհաքաղաքական նոր քարտէզի: Բայց, արի ու տես, որ մենք ամէն օր աւելի ենք հեռանում մարդկութեան այսօրուայ իդէալներին եւ նեխում սովետական կրթութեամբ քաղաքական բոսսերի լեշի տակ: Մարդ սարսափում է նայելով այսօրուայ կուսակցութիւնների երիտասարդ թեւերի առաջնորդներին, ընդ որում՝ թէ՛ իշխանական եւ թէ՛ ընդդիմադիր: Պայից աւելի կաթոլիկ, Սերժից աւելի Սերժացած, Լեւոնից առաւել Լեւոնական, Գաղիկից աւելի բարգաւաճ:

Ինչ խօսք, կաթուածահար աշխատաշուկայի պարագայում ջահելները վատ գործ չեն գտել. Համ փող են աշխատում, համ էլ դառնում իւրօրինակ էլիտա: Ոչինչ, որ առաջնորդը մինչեւ վերջ է ստորնացնում նրանց: Բայց, կարծեմ, իրենք են իրենց ապագան դրել նրա ոտքերի տակ: Այնպէս որ, իրենց բաժին ծրարում փողի հետ քոթակ էլ են ստանում: Իրենց ընտրութիւնն է:

Իսկ ի՞նչ է սպառնում այն երիտասարդներին, ովքեր հոգու խորքում ծիծաղում են այս ամէնի վրայ, բայց միեւնոյն ժամանակ յստակ տեսնում, թէ ինչպէս են օրօրի իզոլացուած հայկական այս իրականութիւնից: Անշուշտ, նրանց մի մասը թողել եւ դեռ թողնելու է երկիրը՝ այն յանձնելով ճարպիկ-ճկունների խնամակալութեանը: Որոշները փորձելու են

վիրտուալ Հայաստանում հիմնել համակիրների խմբեր, միաւորումներ՝ յոյս ունենալով իրենց գաղափարներն իջեցնել հանրային գիտակցութեան հարթակներ, քանի որ իրական Հայաստանում շան բուսկայից սկսած՝ մինչեւ քաղաքականութիւն սեփականաշնորհուած է այլեւս եւ այն ամրապնդուած է օրէնքների լեզուով, որը քաղաքական նոր մանեւրումների փոքրիկ անցք անգամ չի թողել: Քաղաքականութիւնն, ըստ Հայաստանի Հանրապետութեան, գործունէութեան ամենաթանկ ասպարէզն է այլեւս, եւ մարգային տարածուածութեան դէպքում ամսական այն արժէ ամենաքիչը 100-150 հազար տոլար: Իսկ քաղաքական ցիվիլ արշաւների սպասարկումը պակաս չէ 1 միլիոն տոլարից: Սա աւելին է, քան դատավճիռը եւ խիստ զարմանալի է, թէ ինչու տարատեսակ օտարերկրեայ

էմիսարները հենց այս խնդիրները չեն բարձրացնում յանուն ժողովրդական Հայաստանի, այլ, չգիտես ինչու, կախում են, այսպէս կոչուած, վերջին ռիտուալից՝ ընտրական բուն պրոցեսից: Անշուշտ, երիտասարդական էներգիայի գոլորշին հնարաւոր չէ բաց թողնել սարքովի ընդդիմադիրների կաթսայատներին, եւ վաղ թէ ուշ այդ էներգիան փողոց է դուրս բերելու իսկական ընդդիմադիրներին՝ այն երիտասարդութեանը, որի օրակարգում արժանապատիւ Հայաստանն է:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
 ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՊԱՁԱՆԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԲՅԿ-Ն ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ԻՐ ՈՒՆԵՑԱԾԸ ՊԱՅԵԼ»

Ընդդիմադիր «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեանը կարծում է, որ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը (ԲՀԿ) ոչ թէ իշխանափոխութիւն է ուզում, այլ ցանկանում է իր ունեցածը պահել եւ եթէ հնարաւոր է՝ աւելացնել:

Սարգսեան «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում ասաց, թէ հենց ԲՀԿ-ն չի ասում, թէ ինքն ընդդիմութիւն է, ասում է, թէ ինքն այլընտրանք է իշխանութեանը:

«Վարդան Օսկանեանը, որ ԲՀԿ-ի ամենաընդդիմադիր եւ քաղաքական տեսակէտներ ասող անհատն է, չի ասում իշխանափոխութիւն, ասում է՝ իշխանութեանն այլընտրանք, չի ասում՝ արդար ընտրութիւններ առանց ընտրակաշառքների, առանց բարեգործական փողերի, տրակտորների, ժամացոյցների կամ պաշտօններ բաժանելու... ԲՀԿ-ն չի ասում՝ ես ուզում եմ ձեզ փոխել, իրենք ուզում են համար 2-ը լինել, իրենք հասկանում են, որ համար 1-ի ոչ արտաքին քաղաքական, ոչ ներքաղաքական, ոչ նիւթական ռեսուրս, ոչ էլ նիւթական ռեսուրսն օգտագործելու հնարաւորութիւն իրենք չունեն: Դրա համար իրենք իրենց ոտքը վերմակից երկար չեն ձգում», - ասաց Սարգսեանը:

«Հանրապետութեան» նախագահի համոզմամբ՝ Գագիկ Ծառուկեանը Սերժ Սարգսեանի դէմ դուրս գալու հնարաւորութիւն չունի: Մարդը, ով վախենում է ասել, որ ինքը ընդդիմութիւն է, նա փողոց, հրապարակ դուրս եկող չէ, իսկ առանց հրապարակի այս իշխանութիւնը իշխանութիւն տուող չէ, ասում է Սարգսեանը: Ընդդիմադիր կուսակցութեան ղեկավարը նաեւ ընդգծում է, որ այսօր անգամ առանց իշխանութեան թոյլտուութիւնը ստանալու հնարաւոր չէ երկրում ընտրակաշառք բաժանել կամ տրակտոր նուիրել:

«Փող ու տրակտոր բաժանելը պիտի թոյլ տան: Վարդան Օսկանեանի օրինակը ցոյց է տալիս, որ նոյնիսկ Հանրապետութեան տուած գու-



«Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար Արամ Սարգսեան

մարները բաժանելը այս իշխանութիւնը թոյլ չի տալիս: Կարող ես շատ-շատ փող ունենալ այս երկրում ու չկարողանաս դա որպէս ընտրակաշառք բաժանել: Այստեղ երկու խնդիր է լուծուած՝ ինչպէս անել, որ եղածը պահել, ինչպէս անել, որ եղածն էլ աւելի աւելացնել: Այս խնդիրներն են լուծուած երկու թեւն էլ, ոչ աւելի: Ու այդ ամէն ինչը ներկայացնում են ժողովրդավարութեան, հայրենիքի, պետութեան հանդէպ ունեցած սիրոյ կոնտեքստներում», - ասաց Սարգսեանը:

Պատասխանելով հարցին, թէ այդ դէպքում ինչու է նա հայ ազգային կոնգրէսում նշում, որ ԲՀԿ-ն ունակ է Սերժ Սարգսեանին մարտահրաւէր նետելու, Սարգսեանն ասաց, թէ չի ցանկանում դա մեկնաբանել, առաւել եւս, որ ՀԱԿ-ում այդ մտտեցումների առումով իր տեսակէտներ շատ յստակ արտայայտել է պատգամաւորական մանդատը վայր դնելով եւ ՀԱԿ-ից դուրս գալով:

Հարցին, թէ որոշում կայացրել է իր թեկնածութիւնը առաջադրելու վերաբերեալ, «Հանրապետութեան» ղեկավարը պատասխանեց. - «Ես շատ կ'ուզեմ, որ 2013-ին էլ ընտրութիւնները տեղափոխուեն իշխանութիւն-ընդդիմութիւն դաշտ, իսկ այդտեղ առաջին խնդիրն է, որ այդ թեկնածուն լինի ընդդիմադիր դաշտից: Երբ դա եղաւ, դա յստակ կ'երեւայ: Եթէ դա կը լինեմ ես, ամբողջ նուիրումով կ'անեմ դա»:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՍԱՆԱԿ». ՕՍԿԱՆԵԱՆԻ ԴԵՍ ՅԱՐՈՒՑՈՒՄԸ ՔՐԳՈՐԾՆ ԿԱՐՃՈՒԵԼՈՒ Է

Քաղաքական շրջանակներում տեղեկութիւններ են պտտուում, որ ԱԱԾ-ում յարուցուած փողերի լուսացման գործը, որում ՀՀ նախկին ԱԳ նախարար Վարդան Օսկանեանն այժմ ներգրաւուած է որպէս մեղադրեալ, առաջիկայում կարճուելու է: Ըստ քրգործին ծանօթ անձանց՝ կարճման երկու ճանապարհ կայ: Դրանցից մէկը դէպքում ակտիւ դերակատարութիւն պէտք է ունենայ ամբիկացի բարերար, հանրայայտ Հանրամասնը, որի փողերը լուանալու համար մեղադրում են Օսկանեանին: Ըստ այդմ՝ Հանրամասնը պէտք է հանդէս գայ յայտարարութեամբ եւ յոգս ցնդեցնի մեղադրանքները, որից յետոյ գործի քննութիւնը կը դառնայ անիմաստ:

Այս ընթացքում Օսկանեանի ներկայացուցիչները բազմիցս յայտարարել են, որ Հանրամասնը կը խօսի, եւ նրա խօսքը փոթորկի ազդեցութիւն կունենայ: Եթէ ինչ-ինչ պատճառներով սա տեղի չունենայ, ապա գործի կարճման այլ ճանապարհ էլ կայ: Թերթի տեղե-

կութիւններով, նախաքննութեան շրջանակում ներկայումս բանկային ստուգումներ են ընթանում: Եւ անհ դրանց աւարտից յետոյ նախաքննական մարմինը կարող է յայտարարել, որ խախտումներ չեն յայտնաբերուել:

Ըստ իշխանական շրջանակներում պտտուող լուրերի, Օսկանեանի գործը կարճուելու անհրաժեշտութիւն է ծագել, քանի որ 2013-ի նախագահական ընտրութիւնների համար նախապէս ծրագրուած սցենարում ինչ-որ պահի փոփոխութիւն է տեղի ունեցել, այսինքն անցում է կատարուել «պլան Բ»-ին, որի մէջ «Տալիբալ Օսկանեան» չկայ: Ուստի, աւելորդ գլխացաւանք էլ ոչ ոքի պէտք չէ: Այս տեղեկատուութիւնը շրջանառողների ուշադրութիւնից չի վրիպում, իհարկէ, մի փոքրիկ հանգամանք ՀՀ գլխաւոր դատախազ Ադրան Յովսէփեանը: Բոլորն էլ հասկանում են՝ ինչ ճանապարհով էլ այս աղմկոտ գործը կարճուել, վատ վիճակում է յայտնուելու գլխաւոր դատախազը:

«ԲՅԿ-Ի ԵՒ ԲՅԿ-Ի ՄԻՋԵՒ ԻՐԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆ».- Ռ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

«Հայաստանի Հանրապետական կուսակցութեան» եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան միջեւ իրական հակասութիւններ գոյութիւն ունեն, եւ այս հանգամանքը կարող է հանգեցնել իրական մարտահրաւէրների, երբ կուսակցութիւններն առաջադրեն նախագահի իրենց թեկնածուներին: Լրագրողների հետ հանդիպման իր համոզմունքը յայտնեց քաղաքագէտ Ռիչարդ Կիրակոսեանը:

«Բայց իրականում չգիտեմ, թէ ինչ են մտածում այս կուսակցութիւնները, եթէ, իհարկէ, մտածում են: Արդէն անցել է այն կէտը, որ սա նման էր թատրոնի: Առաջիկայ նախագահական ընտրութիւնները, այս առումով, տարբեր կը լինեն նախորդ նախագահական ընտրութիւններից, երբ մենք ունէինք կեղծ թեկնածուներ՝ ինչպիսին էր Արտաշէս Գեղամեանը կամ անյոյս թեկնածուները», - ասաց նա եւ նշեց, որ այս դէպքում մենք տեսնում ենք իրական մրցակցութիւն:

Ռիչարդ Կիրակոսեանն ընդգծեց, որ եթէ անգամ ԲՀԿ-ն թեկնածու չառաջադրի, ապա, այնուամենայնիւ, հակասութիւնը իրական է, ապացոյցն էլ՝ պատգամաւոր Վարդան Օսկանեանի դէմ յարուցուած գործն է:

Միաժամանակ, Ռիչարդ Կիրակոսեանն ընդգծեց, որ, իրականում, ոչ մի քաղաքական արշաւի ականատես չենք լինում:

«Աւելի շատ տեսնում ենք քաղաքական հոբբի, քան ընտրաշաւ: Թուում է, թէ նախագահական



Քաղաքագէտ Ռիչարդ Կիրակոսեան

ընտրութիւններում կը վերընտրուի Սերժ Սարգսեանը: Հիմնականում այն պատճառով, որ գոյութիւն չունի կենսունակ այլընտրանք: Դա կապուած է նաեւ աղմինիստատիւ ռեսուրսների հետ: Ես չեմ ասում հաւանում եմ նրան, թէ՛ ոչ, բայց ես ուշալ կը նայում իրավիճակին, եւ չեմ տեսնում այլ թեկնածու», - ասաց նա:

Անդրադառնալով «Հայ ազգային կոնգրէս» ընդդիմադիր դաշինքի եւ ԲՀԿ-ի յարաբերութիւններին եւ նրանց միջեւ հնարաւոր դաշինքի ստեղծմանը, քաղաքագէտը նշեց, որ ԲՀԿ-ի եւ ՀԱԿ-ի «պարը» միանշանակ տանգո չէ:

«Տանգոն պահանջում է երկու կողմ: Պարողներից մէկը չի ցանկանում պարել: Ես կասկածամիտ եմ նմանատիպ դաշինքի ձեւաւորմանը, քանի որ ուժեղ անհատներ են ներգրաւուած: Հայաստանի քաղաքական պատմութիւնից մի բան պէտք է սովորենք, որ երբեք անակնկալ կամ անսպասելի դաշինքներ չեն ձեւաւորուել», - ասաց նա:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՏՈՒԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ 44,6% Է».- ՀՐԱՆԴ ԲԱԳՐԱՏԵԱՆ

Հայաստանում ստուերային տնտեսութիւնը 44,6% է: Այդ մասին Հոկտեմբերի 30-ին, Ազգային ժողովում յայտարարեց պատգամաւոր Հրանդ Բագրատեանը՝ հիմնուելով «Ամենաթի ինթերնէյշնլ» իրաւապաշտպան կազմակերպութեան տուեալների վրայ: Ընդ որում՝ եթէ 5 տարի առաջ Հայաստանը ստուերային տնտեսութեան մակարդակով 138 երկրների շարքում 110-րդ տեղում էր, ապա ներկայումս՝ 129-րդ:

Որպէս ստուերային տնտեսութեան աճի ապացոյց, Հ. Բագրատեանը մատնանշեց նաեւ պետական եկամուտներ/ՀՆԱ յարաբերակցութեան նուազումը 2011-13 թ.թ.՝ 22,77 %-ից մինչեւ 22,74%:

Ֆինանսների նախարար Վաչէ Գաբրիէլեանի համար այս հարցադրումն ակնյայտօրէն անակնկալ էր: Նա նշեց, որ հարկային օրէնսդրութեան փոփոխութիւններ

ի եւ վարչարարութեան ոլորտում կատարուող միջոցառումների շնորհիւ պետական բիւջէի եկամուտները չեն կարող նուազել: Այնուհետեւ յաւելեց, որ հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում աճել է:

Նշենք, որ ըստ կառավարութեան կողմից ներկայացուած ուղեքննիչ պետական եկամուտների կշիռը ՀՆԱ-ում 2011-13 թ.թ. իրօք նուազել է, սակայն դա տեղի է ունեցել պաշտօնական դրամաշնորհների հաշուին (արտասահմանից ստացուող նուիրատուութիւններ), իսկ ներքին աղբիւրների հաշուին եկամուտներն իրապէս աճել են նաեւ ՀՆԱ-ում:

Ինչ վերաբերում է «Ամենաթի ինթերնէյշնլ» կազմակերպութեան գնահատականներին, ապա Վ. Գաբրիէլեանը հեզմեց, որ ստուերային տնտեսութեան գնահատականները չեն կարող տասնորդական աստիճանի ճշգրտութիւն ունենալ:

ԽԱՂԱՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈՒՍԸ ՀԱՆԳՍԱԿԱՅՐԵՐ ԿԱՐՈՂ Է ՅԵՏԱԶԳՈՒԵԼ

2013-ի Յունուարի 1-ից Հայաստանում խաղատները պէտք է գործէին միայն Սեւան, Ջերմուկ, Ծաղկաձոր քաղաքներում: Այս մասին օրէնք ընդունուել էր դեռեւս 2010-ին, սակայն ԱԺ-ի քառօրեայ ընթացքում, ներկայացնելով կառավարութեան առաջարկը՝ Ֆինանսների փոխնախարար Վարդան Արամեանը յայտնեց, որ օրէնքի կիրառումը կը յետաձգուի մէկ տարով: Այսօր Հայաստանում գործում է 100 խաղասրահ եւ 10 խաղատուն, որոնք տարեկան պետական բիւջէ են վճարում 7-8 մլրդ դրամ: «Շահուածով խաղերի եւ խաղատների մասին» օրէնքում փոփոխութիւն եւ լրացումներ կատարելու մասին 2010 թ. ընդունուած օրէնքի գործողութեան արդիւնքում, ըստ փոխնախարարի, կտրուի կը նուազի խաղատների եւ խաղասրահների թիւը, իսկ բիւջէն կը կրի շուրջ 6 մլրդ դրամի կորուստ: Կը նուազի նաեւ այդ ոլորտում զբաղուածութեան մակարդակը. ներկայիս 1000-1300 աշխատողներից շուրջ 700-ը կը դառնան գործազուրկ:

2013-ի Յունուարի 1-ից Հայաստանում խաղատները պէտք է գործէին միայն Սեւան, Ջերմուկ, Ծաղկաձոր քաղաքներում: Այս մասին օրէնք ընդունուել էր դեռեւս 2010-ին, սակայն ԱԺ-ի քառօրեայ ընթացքում, ներկայացնելով կառավարութեան առաջարկը՝ Ֆինանսների փոխնախարար Վարդան Արամեանը յայտնեց, որ օրէնքի կիրառումը կը յետաձգուի մէկ տարով: Այսօր Հայաստանում գործում է 100 խաղասրահ եւ 10 խաղատուն, որոնք տարեկան պետական բիւջէ են վճարում 7-8 մլրդ դրամ: «Շահուածով խաղերի եւ խաղատների մասին» օրէնքում փոփոխութիւն եւ լրացումներ կատարելու մասին 2010 թ. ընդունուած օրէնքի գործողութեան արդիւնքում, ըստ փոխնախարարի, կտրուի կը նուազի խաղատների եւ խաղասրահների թիւը, իսկ բիւջէն կը կրի շուրջ 6 մլրդ դրամի կորուստ: Կը նուազի նաեւ այդ ոլորտում զբաղուածութեան մակարդակը. ներկայիս 1000-1300 աշխատողներից շուրջ 700-ը կը դառնան գործազուրկ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱՐԳԱԲԱՃՈՒԹԵԱՄԲ ԱՇԽԱՐՀՈՒՄ 98-ՐԴ Է

Լոնդոնում տեղակայված «Լեգատում» վերլուծական հաստատությունը պատրաստած զեկոլոգները փոխանցում են որեւէ երկրում մասնաճիւղ բացելու մտադրություն ունեցող ընկերություններին, ինչպէս նաեւ միջազգային հետազոտական հաստատություններին:

Այս տարուայ զեկոլոգում ընդգրկվում է 142 պետություն, որտեղ ապրում է մոլորակի բնակչության 96 տոկոսը եւ արտադրում է աշխարհի համախառն արդիւնքի 99 տոկոսը:

«Լեգատում»-ի վերլուծաբանները ցուցիչը կազմելիս հաշուի են առնում 8 գործօն՝ սնտեսություն, գործարարություն, կառավարում, կրթություն, առողջապահություն, անվտանգություն, անձնական ազատություն եւ սոցիալական կապիտալ:

Զեկոլոգում պետությունները դաստեղծ են չորս կարգի՝ բարձրաճանձություն բարձր, միջինից բարձր, միջինից ցածր եւ ցածր աստիճան:

Հայաստանը այդ ցուցիչով միջինից ցածր կարգում է եւ 142 պետությունների ընդհանուր ցանկում գրաւել է 98-րդ տեղը:

Հայաստանի սնտեսությունն աշխարհում 129-րդն է: Սա նշանակում է, որ 128 երկրներում աւելի արդիւնաւէտ մակրոտնտեսական քաղաքականություն է, զարգացում եւ ֆինանսական սեկտորի արդիւնաւէտություն:

Գործարարության ենթացուցիչը «Լեգատում»-ը կազմում է՝ հիմք առնելով գործարարի համար ստեղծուած պայմանները, նրան տրուող հնարաւորությունները: Այս հարցում

Հայաստանը 81-րդ երկիրն է:

Կառավարումը ենթադրում է պատասխանատու կառավարություն, արդար ընտրություններ, քաղաքական մասնակցություն եւ օրէնքի գերակայություն: Այդ ենթացուցիչով Հայաստանն աշխարհում 97-րդն է:

Առողջապահությունը Հայաստանը 98-րդն է, մինչդեռ կրթությունում, որը հաշուի է առնում կրթության մատչելիությունը, որակը եւ մարդկային կապիտալը, բաւական բարձր՝ 44-րդ տեղում է:

Համեմատաբար բարուք է համարուել նաեւ անվտանգությունը, որը որոշում է պետության եւ անձի անվտանգությունը, այդ ենթացուցիչով Հայաստանը 61-րդն է:

Ամենավատ ցուցանիշները վերաբերում են անձնական ազատությունը եւ սոցիալական կապիտալին, այդ բնագաւառներում երկիրը գրաւել է 122-րդ եւ 124-րդ տեղերը:

Անձնական ազատության ցուցիչը որոշում է երկու հանգամանքով՝ անձի ազատություն եւ հանրային հանդուրժողականություն:

Սոցիալական կապիտալը վերաբերում է բնակչության ակտիւությունը, ներգրաւուածությունը բարեգործությունը, ընտանիքների մասնակցությունը համայնքային կեանքին:

Հայաստանի հարեւաններ Ադրբեջանը եւ Վրաստանը փոքր-ինչ աւելի լաւ վիճակում են եւ զբաղեցնում են, համապատասխանաբար, 94-րդ եւ 95-րդ տեղերը, Թուրքիան 89-րդն է, Իրանը՝ 102-րդը:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԽՕՍԵԼ Է ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՍՏՈՐ ԵՒ ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՅՈՒՄԸՔԻ ՄԱՍԻՆ



Սերժ Սարգսեանն իրաւապահ մարմիններու մերկայացուցիչներուն հետ հանդիպման ընթացքին

Նախագահ Սերժ Սարգսեանն ՀՀ դատախազությունում իրաւապահ մարմինների ներկայացուցիչների մասնակցութեամբ խորհրդակցութիւն է հրաւիրել քրէական գործերով իրականացուող նախաքննութեան վիճակին առնչուող խնդիրների կապակցութեամբ, այս մասին տեղեկացնում է նախագահական գրասենեակի կայքը:

Խորհրդակցութեան սկզբում ընդգծելով, որ նախաքննութեան խնդիրների յաջող լուծումն առաւելապէս պայմանաւորուած է այս ոլորտում դատախազական հսկողութեան բացառիկ գործառույթի պատշաճ իրացումով, Նախագահը դատախազութեան գործունէութեան մէջ առանձին յանցատեսակների դէմ պայքարում նկատելի դրական տեղաշարժի մասին խօսելուց բացի, խստորեն քննադատել է դեռեւս առկա բացասական երեւոյթները՝ առանձին դատախազների անփութութեամբ կամ չարամտութեամբ պայմանաւորուած գործողութիւնները:

Իր խօսքում Սերժ Սարգսեանը, մասնաւորապէս, ասել է. «Նախագահի աշխատակազմում քաղաքացիներից ստացուած դիմումների եւ բողոքների ստուգման արդիւնքում նախաքննական պրակտիկայում բացայայտուել են փաստեր, որոնք ուղղակի անհամատեղելի են առողջ բանականութեան հետ: Հերիք չէ, որ քննութիւնը վարող պաշտօնեաները գործի հանգամանքները պարզելու փոխարէն կեղծիքների միջոցով փոխում են դէպքի փաստերը, դեռ հովանաւորում են յանցագործներին եւ պարտակում յանցագործությունը: Աւելին՝ որոշ դէպքերում յանցագործությունը բարդում են ուրիշի վրայ: Իրաւապահ մարմնի աշխատողի կողմից աւելի ստոր եւ անբարոյական արարք եւ ուղղակի չեմ պատկերացնում: Մենք այսօր դեռեւս այդ փաստերի մասին կը լսենք»:

Խորհրդակցութեան աւարտին Սերժ Սարգսեանն ընդգծել է, որ շահագրգիռ վերաբերմունք է ակնկալում ՀՀ գլխաւոր դատախազից, դատախազի տեղակալներից, քննութեան պատասխանատուներից:

«Ես պահանջում եմ բոլորից սկզբունքայնութիւն: Իւրաքանչիւրը պէտք է պատասխանատուութիւն ունենայ, եւ այդ պատասխանատուութիւնը պէտք է ֆիքսուած լինի: Մենք 2012թ. առաջին եռամսեակի արդիւնքներով նորից անդրադառնալու ենք քննութեան որակին եւ կոնկրետ փաստերին», - ընդգծել է Սերժ Սարգսեանը:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ «ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՎՃՈՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»



Մինսկի Խոււմբի համաձայնագրահանգրը Հայաստանի եւ Ատրայէյնանի արտաքին գործոց նախարարներուն հետ, Փարիզի մէջ կայացած հանդիպման ընթացքին

Շաբաթ, Հոկտեմբեր 27-ին Փարիզում տեղի է ունեցել Հայաստանի արտգործնախարար էդուարդ Նալբանդեանի հանդիպումը ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադֆէլի, Իգոր Պոպովի, Ժակ Ֆորի եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջէլ Կասպլիկի հետ: Այնուհետեւ հանդիպումը շարունակուել է Ադրբեջանի արտգործնախարար էլմար Մամեդբարովի մասնակցութեամբ:

Հայաստանի արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ, համանախագահներն ընդգծել են կողմերի միջեւ լարեւածութեան նուազեցման կարեւորութիւնը: Իբրեւ աշխատանքային առաջարկ, նրանք ներկայացրել են իրենց գաղափարները՝ խաղաղ կարգաւորման գործընթացին

առաջ մղելու նպատակով:

Պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, նախարարները վերահաստատել են իրենց վճռականությունը՝ շարունակելու համանախագահների հետ համատեղ աշխատանքը՝ խաղաղ կարգաւորման համեմուտ նպատակով: Նախարարները եւ համանախագահները պայմանաւորուել են այդ գաղափարների շուրջ քննարկումները շարունակել համանախագահների՝ Նոյեմբերին տարածաշրջան կատարելիք այցի ընթացքում:

Սա Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների առաջին հանդիպումն էր Օգոստոսի 31-ին Հունգարիայի կողմից ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի արտայանձնումից եւ Ադրբեջանի նախագահի կողմից նրան ներում շնորհելուց ի վեր:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՄՆ-Ը ԿՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՆ ՈՒՋՄԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայաստանը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները առաջիկայում համագործակցութիւն կը սկսեն ռազմարդիւնաբերութեան ոլորտում:

Այդ մասին յայտնի դարձաւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնում նախարար Սէյրան Օհանեանի եւ ԱՄՆ ռազմածովային ուժերի քարտուղար Ռէյ Մաբուսի աւելի քան մէկ ժամ տեւած բանակցութիւններին յաջորդած համատեղ ճեպագրուցիչ ընթացքում:

«Սա նոր ուղղութիւն է, որ-

տեղ մենք կարող ենք փորձի փոխանակում իրականացնել, որովհետեւ համարում ենք, որ լինելով ետխորհրդային պետութիւն՝ մենք հիմնականում մեր սպառազինութեան եւ ռազմական տեխնիկայի կազմում ունենք խորհրդային Միութեան միաւորները, այնուամենայնիւ, տարբեր առաջատար չափանիշների ներդրման ուղղութեամբ մենք կարող ենք փորձի փոխանակում իրականացնել՝ յատկապէս յատուկ նշանակութեան միջոցների օգտագործման ուղղութեամբ», - յայտարարեց Սէյրան Օհանեանը:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՏԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Դետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

ՕՊԱՄԱ ԿԱՍ ՌՈՄՆԻ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Ամերիկյան պիտի ընտրէ իր նախագահը Նոյեմբեր 6-ին, եւ ամէն տեսակի գուշակութիւններ ու հաշիւներ ցոյց կու տան որ յաղթանակ տանելու մէջ գրեթէ հաւասար ուժ կը ներկայացնեն Հանրապետական եւ Դեմոկրատ կուսակցութիւնները: Ամերիկայի մէջ առաջին անգամ ըլլալով կարծէք գաղափարական պայքար կայ ունեւորներու եւ չունեւորներու միջեւ. իրենք գիրենք «հաւատացեալ» կոչողներու եւ այդպիսիներու կողմէ «անհաւատ» կոչուող «այլազաններու» միջեւ. պետութեան հաշուոյն ապրիլ ուզող (Ռոմնիի վերադարձը սպրդած լուրով) ժողովուրդի քառասունեօթ առ հարիւր տոկոս ներկայացնող «անգործ» կամ «ծուլ» նկատուող ամերիկացիներու եւ անոնց դէմ կանգնող «աշխատասէր» կամ «գործունեայ եւ տրատու» ամերիկացիներու միջեւ:

Երեք հեռատեսիլային վիճաբանական ելոյթներէ (TV debate) ետք, Օպաման եւ Ռոմնին յստակօրէն փորձեցին սիրաշահիլ միջակ դասակարգը Ամերիկայի, որ կը ներկայացնէ մեծագոյն տոկոսը քուէարկողներուն եւ որ կը տառապի իր կեանքի մակարդակի անկումէն: Տնտեսական նեղ վիճակի մէջ եղող միջակ դասակարգը, որ անգործ է եւ իր բժշկական պէտքերը հոգալու համար ապահովական բազմաժախ ու բարձր վճարում (premium) պահանջող ընկերութիւններու կողմէ շարունակ կը շահագործուի, պէտք է եւ պարտի գիտնալ թէ ընկերային ծառայութիւն տուող կողմը պէտք է յաղթէ յառաջիկայ ընտրութիւններուն, որպէսզի ան սեփական շահերով հետաքրքրուող մեծ ընկերութիւններու գոհը չմնայ: Ան սուտերով պէտք է սարուի կամ խաբուի թէ հարուստն է որ գործ կը ստեղծէ եւ չհաւատա՛ որ անոր շահերը պաշտպանող կողմը գործ կը ստեղծէ: Պահպանողական տնտեսական տեսակէտներով լեցուն անցեալի ռազմասէր եւ ինքնասէր պահպանողական քաղաքականութիւնն էր ձորճ Պուշի եւ եւրոպացի իր գործակիցներուն որ անգործութիւն պատճառեց աշխարհի մէջ, գոհացնելու համար միլիարներ դիզող հարուստները աշխարհի: Հայ համայնքը Ամերիկայի, որուն մեծամասնութիւնը անկասկած որ միջակ դասակարգին կը պատկանի, հարկ է որ ճիշդ դիրքորոշուի յառաջիկայ ընտրութիւններուն: Հայ անհատը ունի ազգային հոգսերու եւ իրաւունքներու կողքին մարդկային հոգսեր ու իրաւունքներ: Հայուն մէջ հայ ըլլալու կողքին կայ մարդ ըլլալու վիճակով տարուող ամենօրեայ կեանքի հեւքին ու վազքին հետ ընթացող



ամենօրեայ պայքար, ընտանիքի ապրուստը ճարելու, ուսանելու ծախսը հոգալու, եւ առողջութեան դարմանում ապահովելու: Ազգային պատկանելութեան կողքին ունինք մարդկային պատկանելութիւն: Գործատէր կամ դրամատէր մեծահարուստ հայուն արդար իրաւունքն է չքուէարկել ընկերային ծառայութիւն ապահովող կողմին, այսինքն Օպամային, որովհետեւ ան պէտք չունի այդ ծառայութեան:

Բայց կոչ ուղղել Ամերիկահայութեան, որուն մեծամասնութիւնը անկասկած կը պատկանի ամենօրեայ ապրուստի պայքար տանող միջակ դասակարգին, որ ան կողմ չբռնէ յառաջիկայ ընտրութիւններուն որովհետեւ երկու թեկնածուներն ալ անվստահելի կեցուածք ունին Հայկական Յեղասպանութեան պաշտօնական ծանուցման առընթերցմամբ, կը նշանակէ անոր մերկացնել իր մարդկային պատկանելիութենէն եւ գինք հազցնել սահմանափակ ու «կէթօ»ացած հայկական կամ ազգային պատկանելիութիւն: Զրլլանք նման անոնց որոնք յարատեւ իսրայէլի կողքին են առանց հարցականի ենթարկելու անոր երբեմն մարդկայնօրէն անընդունելի արարքները, որովհետեւ որոշ կրօնի կամ հաւատքի կը պատկանին: Հնչակեան կուսակցութեան Հայ Ամերիկեան Խորհուրդը ինքնացի կեցուածք որդեգրեց վերջերս՝ յայտարարելով որ ան գորավիզ կը կանգնի Պարաք Օպամայի ընտրութեան, անոր վերընտրութիւնը նկատելով յաղթանակ մը ամերիկացի ժողովուրդի մեծամասնութեան տնտեսական, հարկային, ընկերային եւ քաղաքական շահերուն: Եւ որովհետեւ հաւասար կը նկատուին հակադիր երկու ուժերը, ամերիկահայերու ինքնացի դիրքորոշումը եւ քուէարկումը ի նպաստ Օպամայի կրնայ ռազմասէր ու ինքնասէր պահպանողականներէն փրկել Ամերիկան եւ անոր կառքով ճամբորդող աշխարհը:

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ ՃԱՇԿԵՐՈՅԹ ՆՈՒԻՐՈՒԱԾ Ս.Դ.Յ.Կ.-Ի 125 ԱՄԵԱԿԻՆ



Վարիչ Մարմինի անդամներ, քաղաքացետ Անտրէ Սանդիքիի հետ

Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2012-ին սկիզբ առաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան պանծալի 125-ամեակին նուիրուած ձեռնարկներուն երկրորդ բաժնի գործադրութիւնը, Ս.Դ.Յ.Կ. Ֆրանսայի շրջանի հովանաւորութեամբ: Ֆրանսական Իսի Լէ Մուլինօ քաղաքի PACI սրահին մէջ հաւաքուած էին աւելի քան 200 հրաւիրեալներ, որոնք հոն ժամանած էին ունկնդրելու լիբանանահայ յայտուի երգիչ եւ ազգային-կուսակցական երգերու մեկնաբան Պերճ Նազգաշեանին, որ Լիբանանէն հրաւիրուած էր Ֆրանսա, յատկապէս մասնակցելու այս ճաշկերոյթ-պարահանդէսին: Հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբին անունով տիկին Անի Գայեանի բացման ու բարի գալուստի խօսքէն ետք, յաջորդաբար խօսք առին օրուան հիւրը՝ Իսի Լէ Մուլինոյի երեսփոխան քաղաքացետ՝ Անտրէ Սանդիքին, ինչպէս նաեւ Ս.Դ.Յ.Կ.-ի Ֆրանսայի շրջանի վարիչ մարմնի ատենապետ՝ ընկեր Գէորգ Սաչլեանը: Հոկտեմբերի 27-ին սկիզբ առած ձեռնարկներուն այս երկրորդ բաժնին պիտի յաջորդեն այլ չորս ձեռնարկներ: Նոյեմբեր 13-ին տեղի պիտի ունենայ ազգային երգերու համերգ, իսկ Կիրակի, 18 Նոյեմբեր 2012-ին հոգեհանգիստ պիտի կատարուի, Ուրբաթ 23 Նոյեմբերին պիտի գումարուի գետաժողով մը, իսկ Շաբաթ 15 Դեկտեմբերին պիտի կայանայ ձեռնարկներուն եզրափակիչ ընդունելութիւնը: Յաջորդութիւն եւ բարի երթ կը մաղթենք Ֆրանսայի շրջանի մեր ընկերներուն:

ՀԱԼԵՊԻ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ՅՐԿԻԶՈՒԱԾ

Մարումակուած էջ 1-էն
տուլթեան կողմէ:
Հալէպ-Հոմս մայրուղին վերջին երկու ամիսներուն յաճախ կ'օգտագործուէր Պէյրութ ժամանող եւ Հալէպ վերադարձող ճամբորդներու կողմէ: Մայրուղիին վրայ փոխադրակառքերը կը հանդիպին թէ՛ ընդդիմութեան, թէ՛ կանոնաւոր բանակի անձարգելներու, սակայն հայերը միշտ արժանացած էին դրական վարուելակերպի: Միւս կողմէ, լուսանկարներով ապացուցուեցաւ, որ Հալէպի Նոր Գիւղ թաղամասին մէջ

գտնուող Սուրբ Գէորգ հայկական եկեղեցին իսկապէս հրկիզուած է: Քանի մը օր առաջ, Հալէպահայ գաղութի հեղինակութիւնները հերքած էին հրկիզման մասին տարածուած լուրերը: Ըստ լուսանկարներուն, հրկիզուած են նաեւ դպիրներու եւ քարտուղարութեան սենեակները, սրբանկարները եւ սրբազգեստները: Եկեղեցոյն կառուցը տակաւին կանգուն է, սակայն ըստ Բերիոյ Թեմի առաջնորդարանին, վերանորոգումներ առայժմ չեն ծրագրուած, նկատի առնելով որ եկեղեցին կը գտնուի ռազմական ճակատի վրայ:

ՀԱՍԱՆ ԾԵՍԱԼԻ ԳԻՐՔԸ

Մարումակուած էջ 1-էն
պաշտպանէր Թրքական կառավարութեան պետական դիրքորոշումը եւ կ'աւարտի նոյն նիւթին շուրջ անցեալ տարի Քալիֆորնիոյ համալսարանէն ներս ունեցած ելոյթով, ուր Հասան Ջեմալ հրապարակաւ ճանչցած էր Հայոց ցեղասպանութիւնը: «Ջաման» այս առթիւ կը գրէ որ, գիրքի գտած ընդունելութիւնը ցոյց կու տայ, այս հարցի նկատմամբ աճող հետաքրքրութիւնը Թրքական հասարակութեան մօտ:

Գիրքի հեղինակը կամ հրատարակիչը մինչ օրս որեւէ հետապնդումի չեն ենթարկուած: «Այս ցոյց կու տայ, թէ որքան առաջ կ'երթայ Թուրքիան՝ տարուները յաղթահարելու ճանապարհին», կը գրէ «Ջաման»: «Ժամանակին Հրանդ Տինք ըսած էր. - «Առաջինը անհրաժեշտ է ոչ թէ ժխտել կամ ճանջնալ, այլ՝ տեղեկանալ կատարուածին»: Համոզուած եմ՝ այս խօսքերը հրատապ են նաեւ այսօր», - եզրափակելով կը գրէ «Ջաման»-ի յօդուածագիրը:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածառակներու և մտնուկներու Քայրափայտիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային և մկանային ցաւեր:
Բնորոշարթի վթարի հետախնդրով պատուած
վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

massispost.com
daily news updates

ՄԵԾ ԲԱՑԱԿԱՆԵՐԸ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի ՆԱԽԾԻՐԻՆ 13-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ)

ԱԻՆՏԻՍՈՒԱԶՄԻԿ

Այսօր օրացույցս դարձեալ կը լիչեցնէ Հոկտեմբեր 27 թուականը:

Հայաստանի երրորդ հանրապետութեան պատմութեան ամենասե տարեթիւն է այդ: Բեկումնային օր մը, որ կասեցուց հանրապետութեան բնականոն զարգացման ընթացքը, շեղեց իր հունէն եւ ազգն ու հանրապետութիւնը թողուց առանց իսկական առաջնորդներու: Վայրագաբա՛ր, հայանուն արարածներու կողմէ արնաշաղախ ինկան 8 պետական մարդիկ եւ յատկապէս երկու շնորհալի ու տաղանդաւոր դէմքեր՝ մեր պատմութեան մէջ հագուադէպ պատահող: 8 նահատակներ եկան միանալու մեր բերաւոր նահատակներու աստղաբոյլին՝ իրենց պատգամն ու իշատակը առ յաւէտ լուսաքանդակելով մեր լիչողութեան մատնանին:

Ցնահատակներու շարքին, մեր դիմաց կը յանին երկու սոսկավիթի խարանհատականութիւններ՝ ԿԱՐԷՆ ԴԵՄԻՐՃԵԱՆ եւ ՎԱԶԳԷՆ ՍԱՐԳՍԵԱՆ:

Մեր պատմութեան քիչ-շատ ծանօթ մարդիկ կրնան հաստատել, թէ մենք դարեր ամբողջ տուժած ենք երկու կառուցներու չգոյութեան պատճառով: Երկրի մը եւ ժողովուրդի մը գոյատեւման համար երկու հաստատութիւններու բացակայութեան հետեւանքով՝ ենթարկուած ենք անլուր եւ անվերջ հալածանքներու. անոնք են՝ պետականութիւն ու բանակ:

Մեր պատմութեան քիչ-շատ ծանօթ մարդիկ նաեւ կրնան հաւատաւոր թէ մենք ունեցած ենք հայրենասէրներու եւ գործիչներու հազարաւոր անուններ, անձնուէր եւ խիզախ բերաւոր հերոսներ ու նուիրեալներ. սակայն անոնք բաժնուած են երկու մասի՝ ժամանակի սահմաններուն պատկանողներ եւ պատմութեան մարդիկ: Արդարեւ, շատ քիչերու տրուած է ըլլալ պատմութեան մարդիկ: Նախաինամութիւնը քիչերու ուսերուն այդ բեռն ու պարտականութիւնը կը ծանրաբեռնէ: Պատմութեան մարդիկը ասուպի նման հազուադէպօրէն կը յայտնուին երկնակամարին՝ կոթողուելու համար պատմութեան տարեգրութեան բոլոր շրջաններուն մէջ: Մեր ժամանակակից օրերուն, երկու անհատներ նուաճեցին այդ գագաթը. երկու անձեր արժանացան այդ փառահեղ պատուին՝ պատմութեան մարդիկ ըլլա-

լու հանգամանքին:

Առաջինը՝ պետականութեան հասկացողութեան խորհրդանիշ՝ Կարէն Դեմիրճեան:

Երկրորդը՝ բանակաշինութեան եւ յաղթանակի խորհրդանիշ՝ Վազգէն Սարգսեան:

Անոնք իրենց շրջապատէն զանազանուեցան, որովհետեւ պատմութեան մարդիկ էին: Երէկ իրենց շուրջը, անցեալին եւ այսօր շատ են քաղաքական մարդիկ, կը վիտանան անոնք, կու գան ու կ'երթան. սակայն տարբեր առաքելութիւն ու պատասխանատուութիւն է ըլլալ պատմութեան մարդիկ: Իրօք, քաղաքական գործիչներու մէջ ուշուշ կը յայտնուին դէմքեր, որոնք կը կոչուին պատմութեան մարդիկ:

Ո՞րն է տարբերութիւնը քաղաքական ընթացիկ այրերու եւ պատմութիւն կառուցող գործիչներու միջև:

Ե՛ւ երազներու ու նպատակներու, ե՛ւ գործելակերպով ու միջոցներու ընտրութեամբ իրարմէ կը տարբերին պատմութեան մարդը ու քաղաքական այրը:

Քաղաքական այրը մտահոգ կ'ըլլայ գալիք ընտրութիւններով, մինչ պատմութեան մարդը՝ գալիք տասնամեակներու համար:

Քաղաքական այրը կ'իշխէ իր լծակներով, աշխատանքի կը կոչէ իր կողմնակիցները, կուսակիցներն ու համախոհները. մինչ պատմութեան մարդը կ'իշխէ իր հեղինակութեամբ, կ'ընտրէ լայնախոհները, արժանիներն ու բանիմացները:

Մինչ քաղաքական այրը, ընդմիջտ մտահոգ իշխանութեան հաւանական կորուստէն, կը հակադրուի իր ընդդիմադիրներուն, կ'արհամարհէ իր մրցակիցները. իսկ պատմութեան մարդը, որ չի կասկածիր իր սեփական հեղինակութեան հզօրութեան, գուրգուրանքով կը վերաբերի այլախոհներուն, կը քաջալերէ այլոց՝ անոնց հաւաքական ձգտումներուն եւ ըմբռնումներուն մէջ:

Պատմութեան մարդիկ էին, որոնք ինկան 13 տարիներ առաջ:

Կարէն Դեմիրճեան դեռ խորհրդային օրերուն ժողովուրդին կողմէ բերնէ բերան կը կոչուէր «Թագաւոր». անոր ներդրումն ու հաստատած հիմքերը խորհրդային օրերէն կը մնան մեր պետութեան ամուր սիւները. ան այն հեղինակութիւնն էր, որ Հայաստանը դարձուց բարգաւաճ, ծաղկուն, ամրապնդուող եւ ապագայի լուսաշող հայրենիք: Ան ժողովուրդը պետա-



կանացուց, երկիրը վերածեց կառուցի՝ որուն խարխիւները անխախտ ու անսասան կը մնան ցայսօր: Անոր կառուցած պետականութեան հետքերն ու աւանդութներն են, որ ժառանգած են այսօրուան մարդիկ: Ան դարձաւ մեր օրերու այն երկնառաք անհատը, որուն շա՛տ բան կը պարտինք ազգովին:

Վազգէն Սարգսեան կառուցեց անհնարին ու երազային թուացող մեր հայրենիքին պաշտպանութեան պինդ համակարգը: Ինչ գոհողութիւններու, ինչ պիսիւր հերոսներու եւ մարտերու շնորհիւ կեանքի կոչուեցաւ հայոց ազգային բանակը: Իւրաքանչիւր հայ գինուորը, հայոց բանակի ամէն մէկ հրետանին ու հրասայլը, ամէն հրացանն ու փամփուշտը անոր համար նուիրական արժէք մըն էր: Ան արցախեան յաղթանակին ոգին էր, հայոց բանակին պահպան հրեշտակը, ոստիին՝ սարսափը եւ հայ ռազմիկին սիմպոլը:

Ափսո՛ս, որ այժմ բացակայ են անոնք: Մեծ բացականեր են, որոնց կարիքը կը զգանք ամէն օր: Եթէ անոնց շուքն ու վճռական հայեացքները ըլլային, մերօրեայ ճղճիմ սմսեղուկներ, թալանչիներ, պետական գործիչի պատմուճանով ծածկուած սողուններ, կեղծ զօրավարներ ու աթոռամոլ քուրճի բալասներ պիտի թիրտային Ազգային ժողովէն մինչեւ կառավարութիւն: Եթէ Վ. Սարգսեանը ըլլար բանակէն ներս Շտապի պետեր կաշառքով գինուորներ ազատ պիտի արձակէի՞ն արդեօք, կամ սահմաններուն վրայ հայ գինուորներ իրարու պիտի զգետնէի՞ն անհետեւ զպատճառներով, կամ հրամանատարներ պիտի պղծէի՞ն բանակային մաքուր մթնոլորտն ու ազգաշունչ առաքելութիւնը. կամ անգուժ ու վաշխառու տգրուկներ

հայրենիքի պաշտպան գինուորներուն գոմէշի միս պիտի մատակարարէի՞ն որպէս սնունդ:

Պատմութեան հոլովոյթի բարեբախտ գուզադիպութեամբ մը, պատմութեան այս երկու դէմքերը հանդիպեցան գիրար. ձեռք-ձեռքի տալով կազմեցին դաշինք. նոր թափով սկսան գործել ե՛ւ պետականութեան ե՛ւ բանակի ոլորտներէն ներս. դարձան մեր հայրենիքին երկու առանցքային դէմքերը՝ Ազգային ժողովի նախագահ եւ վարչապետ՝ բայց միշտ կրելով Սպարապետ սագական տիտղոսը: Կարծէք իմաստութիւնն ու փորձառութիւնը եւ ուժն ու յաղթանակի կամքը միացած էին մէկ հոգիի ու մարմնի մէջ: Հայաստանը նոր հորձքով պիտի սլանար 21-րդ դար. «21-րդ դարը մերն է լինելու» բամբ ձայնով վճռեց Վ. Սարգսեանը:

Սակայն՝ մեր պատմութեան քիչ-շատ ծանօթ մարդիկ հաստատ գիտեն, որ պատմութեան մարդիկ ու հայ տաղանդներ թիրախ կը դառնան մեր մէջ իսկ բոյն դրած գործակալներու, լրտեսներու, դաւադիրներու, դաւաճաններու, խաֆիէներու (Երուանդ Օտեանի իսկ արտայայտութեամբ) ձեռքերով: Ինչքան ունեցած ենք հերոսներ ու պատմութեան մարդիկ, սակայն ցաւ ի սիրտ նոյնքան ու աւելի ունեցած ենք թշնամիին ծառայող ժահագէմ զարշէլիներ, գետնաքար շողկալիներ:

Հրանդ Մաթեոսեանի իսկ բնութագրումով. «Մեր փրկիչն էլ, թշնամին էլ մեր մէջ են»...

13 տարիներ առաջ ինկան փրկիչները:

Անկէ ետք, ամէն օր ու ժամ, հայ կեանքէն մեծ բացականերն են անոնք:

Յարգանք՝ 1999 Հոկտեմբեր 27-ի նահատակներու լիշատակին:

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403b
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աձիրաճեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

«HYEAID» ՄԵԿ ՍԻՐՏ-ՄԵԿ ՀՈԳԻ, ՄԻԱՆԱՆՔ ԵՒ ՕԳՆԵՆՔ ՀԱՍԵՐԳԸ ՊԻՏԻ ՆՊԱՍԵ ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ



Սուրբիոյ տազնապալից իրավիճակը կը վտանգէ Սուրիահայութիւնը: Մինչ անոնք ամենօրեայ գոյատեւման համար կը մաքառին, Ամերիկահայերու, մանաւանդ հարաւային Քալիֆորնիահայերու համար կեանքը իր բնականոն ընթացքը ունի:

Սուրբիոյ Հայութեան Զօրակցութեան Մարմինը համերգ մը ծրագրած է «Artists for Kids» կազմակերպութեան գործակցութեամբ որ տեղի պիտի ունենայ Նոյեմբեր 11, 2012ին, Փաստինայի Սիվիլի Կոնգրեսայրահին մէջ: Մեծ խումբ մը արուեստագէտներ քով-քովի պիտի գան միասնաբար իրենց գորակցութիւնը ցուցաբերելու եւ շրջանիս հայութիւնը ոգևորելու Սուրիահայութեան օգնելու պայմանները մասամբ մեղմացնելու համար:

Սերժ Թանգեան, եւ հայրը՝ Խաչատուր Թանգեանը, Ռուբէն Հախվերտեանը, Արթուր Թունճպոյեան, Լիլիթ Փիփոյեան (Հայաստանէն), Արմէն Մովսէսեան, Վիգէն Դարբինեան (Ֆրանսայէն), Սեպուհ Սիմոնեան, Էլիմընթ եւ Վիգա նուագախումբերը, Հայ-Եմբառեակը, Տը Տըրթի Տայմոնտ եւ ուրիշներ: Երաժշտական տարբեր ճիւղերը եւ ոճերը պիտի բաւարարեն բոլոր անոնք որոնք երաժշտութեան սիրահարներ են եւ կը գնահատեն երաժշտութիւնը իբրեւ սրտերը չուզող ու միացնող միջոց:

Համերգի գլխաւոր հովանաւորներն են Գարուն կաթնեղէնի ընկերութիւնը որու կեդրոնն է Սիմի Վէյլի քաղաքը, եւ Կլէնտէյլի Վահան եւ Անոյշ Շամլեան Ազգային Վարժարանը:

Տոմսակները կարելի է ապահովել հեռաձայնով եւ համացանցով՝ itsmyseat.com/HyeAid, 855-4HyeAid (855-449-3243) եւ Ticketmaster.com. Տոմսակներու համար կարելի է Արփի Պարսումեանին հետ կապ պահել 818-500-9997 կամ 626-255-2683:

Սուրիահայութեան համար հանգանակային արշաւը շարունակական է: Անցեալ Օգոստոսին կազմուած Սուրբիոյ Հայութեան Զօրակցութեան Գործադիր Մարմինը նշանակուած էր Արեւմտեան Ամերիկայի մէջ գործող տասը եկեղեցական, բարեսիրական եւ կուսակցական կազմակերպութիւններու միասնական որոշումով: Սուրիահայերու օգնութեան համար Գործադիր Մարմինը արդէն իսկ հանգանակուած գումարներէն 100,000 տոլար փոխանցած է:

Անոնք որոնք կարելիութիւն չունին ներկայ գտնուելու համերգին, կրնան իրենց տուրքէ գերծ նուիրատուութիւնները կատարել հետեւեալ հասցէով՝ Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948 կամ քրէտիթ քարտի միջոցով համացանցի հասցէով՝ www.SyrianArmenianReliefFund.org:

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԿԱՍԵՐԱՅԻՆ ՆՈՒԳԱԽՈՒՄԸ ՀՅ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՊԱԴՈՍՈՒԹԻՆՈՒՄ



Հոկտեմբերի 28-ին Լոս Անճելոսի Կամերային նուագախումբը համերգով հանդէս եկաւ Լոս Անճելոսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնում: Երաժշտական երեկոն ընթացաւ «Հայ երաժշտական ժառանգութիւնը» խորագրի ներքոյ: Համերգի մենակատարներն էին յայտնի թաւջութակահար Արմէն Կապուխեանը եւ դաշնակահար Բրայան Պեզոնը: Նրանք ներկայացրին հայ նշանաւոր կոմպոզիտորների ստեղծագործութիւններ:

Արմէն Կապուխեանը հանդիսանում է Լոս Անճելոսում Կամերային նուագախմբի գլխաւոր թաւջութակահարը: Երաժշտական կարիերան սկսել է 12 տարեկանից: Հանդէս է եկել Լոս Անճելոսի, ՕՔՍ Կամերային նուագախմբերի, Hollywood Bowl-ի եւ այլ յայտնի նուագախմբերի հետ՝ իբրեւ մենակատար կամ գլխաւոր թաւջութակահար: Բրայան Պեզոնը հանդէս է եկել յայտնի սիմֆոնիկ նուագախմբերի հետ եւ Լոս Անճելոսում մասնակցել է Լոս Անճելոսի Կամերային նուագախմբի կազմակերպմանը:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ԱՐՄԱՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԵ ՍՐԲՈՑ ԴԵԻՆՆԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հրաւերով, Կիրակի, Նոյեմբեր 11ին, 2012 առաւօտեան ժամը 10:30ին Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ պիտի Պատարագէ եւ քարոզէ հիւրաբար Թեմա այցելող Դամասկոսի Թեմի Առաջնորդ Տ. Արմաշ Եպս. Նալպանտեան:

Արարողութեանց պիտի հանդիսապետէ եւ Պատարագիչ Հիւր Սրբազան Հայրը հաւատացեալներուն պիտի ներկայացնէ Թեմիս Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան:

Առ ի գիտութիւն, Պատարագիչ Սրբազան Հայրը, որ յատկապէս հրաւիրուած է Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ, պիտի խօսի

Դամասկոսի Հայութեան մասին: Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին Մայր Տաճար՝ միասնաբար աղօթելու եւ լսելու բարձրաստիճան հիւր հոգեւորականին օրուան պատգամը եւ իրազեկ դառնալու Դամասկոսի Հայ ժողովուրդի ներկայ կացութեան:

Ուրախ ենք յայտնելու, թէ Սուրբ Պատարագի ընթացքին Սրբազան Հայրը պիտի ընթերցէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ յղուած Օրհնութեան եւ Շնորհաւորական Գիրը՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան ծննդեան 80ամեակի բարեբաւտիկ առիթով: Արարողութեան աւարտին հաւատացեալները առիթը պիտի ունենան շնորհաւորելու Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեանը:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՊԱՐԳԵՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԵ ՍՐԲՈՑ ԴԵԻՆՆԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հրաւերով, Արցախի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեան, որ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմէ Գոհաբանութեան Տօնին Օրը աւանդութիւն դարձած նուիրահաւաքի (Թելեթօնի) մասնակցութեան համար Լոս Անճելոս պիտի գտնուի, Կիրակի, ՆՈՅԵՄԲԵՐ 18ին, առաւօտեան ժամը 10:30ին պիտի Պատարագէ եւ քարոզէ Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ:

Սուրբ Պատարագի աւարտին Հոգեհանգստեան Մանաւոր Պաշտօն պիտի կատարուի Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Թոր-

գոմ Պատրիարք Մանուկեանի եւ Աւստրալիայի եւ Նոր Զելանտայի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աղան Արքեպիսկոպոս Պալիօզեանի վարձանման քառասունքին առթիւ:

Արարողութեան աւարտին Առաջնորդարանի մէջ տեղի պիտի ունենայ հոգեւորճի սպասարկութիւն՝ կազմակերպութեամբ Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Սանուց Միութեան:

Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին Մայր Տաճար՝ միասնաբար աղօթելու, լսելու Բարձրաստիճան Հիւր Հոգեւորականին օրուան հոգեւոր պատգամը եւ աղօթելու Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի հոգիի խաղաղութեան համար:

բերի հետ եւ Լոս Անճելոսում ճանաչուած է՝ իբր- ֆիլմերի եւ հեռուստատեսային ձայնագրութիւնների մենակատար:

«Հայ երաժշտական ժառանգութեան» երեկոյի ընթացքում հնչեցին Խաչատրեանի, Կոմիտաս-

ի, Բաբաջանեանի, Յարութիւնեանի, Եկմալեանի եւ Աղամեանի ստեղծագործութիւնները: Համերգին ներկայ էին Լոս Անճելոսի Կամերային նուագախմբի աշխատակազմը, խորհրդի անդամները, երաժշտասէրներ:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax :-----

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ «ԱՅՍ ԵՄ ԵՍ» ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ



Ելույթ կ'ունենայ գրականագետ Դոկտ. փոքրիկ Սուրեն Դանիելյան

Սեպտեմբեր 19ին, 2012, Երեւանի Գրողներու Տան դահլիճին մէջ, տեղի ունեցաւ հանրաժանօթ երգահան եւ գրող Հենրիկ Անասեանի «Այս եմ ես» գիրքի շնորհանդէսը: Այս առթիւ իր հետ ունեցած մեր հարցազրոյցի ընթացքին ստացանք հետեւեալ տեղեկութիւններ:

Բազմահարիւր գրասէր հասարակութիւն մը փութացած էր Հայաստանի Գրողներու Միութեան կողմէ կազմակերպուած սոյն շահեկան միջոցառումին: Ներկաներուն մէջ կային ծանօթ գրողներ, ակադեմիկոսներ, փրոֆեսորներ եւ այլ անձնաւորութիւններ:

Գիրքը գրական գեղարուեստական ձեւաւորումով յուշագրութիւն մըն է, պատմութեան ձեւով: «Այս եմ ես»-ը լոյս տեսած է Լոս Անճելոսի մէջ: Հատորը նորութիւն մըն է հայ իրականութեան մէջ: Եղածը հեղինակի 40-ամեայ կեանքի տարեգրութիւնն է, բայց ոչ սովորական յիշողութիւններու ձեւով գրի առնուած:

Գրականագէտ Արտիոմ Սարգիսեանն այս առիթով նշած է «այս գիրքն ինքնին ժամանակագրութիւն մըն է, հայ ժողովուրդի կեանքի 40 տարուան մասին գրուած, չափազանց դիւրամատչելի լեզուով»:

Անասեանի այս հատորի մասին հանգամանօրէն արտայայտուած են Հայաստանի գիտութիւններու Ակադեմիայի փոխ նախագահ Վլատիմիր Բարխուդարեանը, գրականագէտ ակադեմիկոս Արտիոմ Սարգիսեան, գրականագէտ եւ

Սփիւռքի Կեդրոնի ներկայացուցիչ Սուրէն Դանիելյանը, Արամայիս Սահակեանի տիկինը, Գէորգ Դանիելյանը եւ Լեւոն Անանեանը: Բողոքն ալ «Այս եմ ես» գիրքի արժեւորումը կատարելով, բարձր գնահատած են հեղինակի Հենրիկ Անասեանի ստեղծագործական արժանիքները:

Գործադրուած է գեղարուեստական ճոխ յայտագիր մը, մասնակցութեամբ շնորհալի արուեստագէտներ Ազատ Գասպարեանի եւ Սիրվա Իւզպաշեանի (ամուսնք), ինչպէս նաեւ Երեւանի մանկավարժական համալսարանի ուսանողներուն:

Շնորհանդէսի աւարտին արագօրէն վաճառուած են հեղինակի հարիւր գիրքերը, որոնց հասոյթը տրամադրուած է Հայաստանի Գրողներու Միութեան:

Հենրիկ Անասեան ներկայիս կ'աշխատի «Այս եմ ես» գիրքերու շարքի երկ հատորին վրայ:

Կ'իմանանք թէ Գալիֆորնիոյ Հայ Գրողներու Միութեան վարչութիւնը յառաջիկայ Դեկտեմբերի 6ին, 2012, երեկոյեան ժամը 6ին, Կլենտէյլի Հանրային Գրադարանի հանդիսասրահին մէջ, Հ. Անասեանի վերոյիշեալ գիրքը՝ շնորհանդէսով մը պիտի ներկայացուի լոսանձեւոսահայ գրասէր հասարակութեան:

Բարի երթ եւ դալար գրիչ մասեթրօ Հենրիկ Անասեանին, որուն ծննդեան 75 ամեակն է այս տարի: Գ. Մ.

ՎԱՐԷ-ՎԱՐԵԱՆԻ «ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՍԻՐՏԸ» ՆԱՄԱԿԱՆԻՆ ՇՔԵՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Թէքէան Մշակութային Միութեան Լոս Անճելոսի մասնաճիւղին եւ Դարուհի-Յովակիմեան երկրորդական վարժարանի շրջանաւարտներու միացեալ ծրագրումով, Կլենտէյլի Հայ Կաթողիկէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ Գույժմճեան սրահին մէջ տեղի ունեցաւ «Բանաստեղծին սիրտը» հատորին ներկայացումը Կիրակի, Հոկտեմբեր 21ին:

Վահէ Վահեանի (Սարգիս Ապտալեան) այս հատորը հոսքն է բանաստեղծին, գրողին ու մշակութի մեծ ծառային ներաշխարհին, ուր կ'արտացոլան Սփիւռքի եւ Հայրենիքի անցեալին եւ ներկային իրականութիւնները: Իր գաւակին՝ Յոլակ Ապտալեանի նախաձեռնութեամբ հատորը լոյս տեսած է Պէյրութի մէջ՝ 2012ին, խմբագրութեամբ հրատարակագիր Արամ Սեփեթճեանի «Սիփան» հրատարակչատունէն:

Հանդիսութեան ներկայ էին 150էն աւելի գրասէր ընտրանի մը, որ մօտէն ճանչցած էր Վահէ Վահեան բանաստեղծը, խմբագիրը, հրատարակագիրը եւ դաստիարակը:

Լոս Անճելոսի Թէքէան Մշակութային երկրամեայ ատենապետ Վահէ Սեփեթճեանի բացման խօսքով ընթացք տրուեցաւ պատշաճ յայտագրին, կարդալէ ետք Լիբանանի ԹՄՄ-ի վարչութեան ատենապետ Արամ Սեփեթճեանի ողջոյնի գիրքը: Ան հրաւիրեց վարչութեան փոխ ատենապետ Բարսեղ Գարթաթեանը, որ կարդայ Աւստրալիա բնակող Յոլակ Ապտալեանի «Սրտի Խօսքը» յատկապէս ուղղուած օրուան հանդիսութիւնը նախաձեռնող եւ կազմակերպող խումբին եւ իր բարեկամ՝ Վահէ Սեփեթճեանին:

Հանդիսութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ հիւպատոս Արտակ Գալստեանը, հայ կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հոգ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեանը, Արժ. դոկտոր Տ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեանն ու բազմաթիւ նախկին ուսանողներ եւ գրասէրներ, բայց սակաւ թիւով գրողներ:

Առաջին խօսք առնողը եղաւ գաղութէն ներս յայտնի գրագետ, մտաւորական Երուանդ Գոչունեանը, որ իր բովանդակալից խօսքով ծանօթացուց Վահէ Վահեանն ու ժամանակակից գրողները, որոնց հետ ան ունեցած է հարուստ նամակագրութիւն մը: Շեշտուեցաւ Վահէ Վահեանի աշխատակցութիւնը Սփիւռքի գրական մամուլին, մինչեւ 1946 «Անի» պարբերականի լոյս ընծայումը: Գոչունեան յստակօրէն բնութագրեց հեղինակին գրական հարուստ վաստակը:

Յաջորդ խօսք առնողը եղաւ Վահեանի նախկին ուսանողներէն Դարուհի Յակոբեանի շրջանաւարտ Արփի Եղիայեան-Սիմոնեանը, որ տպաւորիչ կերպով ներկայացուց ուսանողական տարիներուն իր ձեռք ձգած սէրը հայ գրականութեան հանդէպ, ինչպէս նաեւ շեշտեց ուսուցիչ Ապտալեանի տարիներու գոհողութիւնը՝ որպէս կրթական մշակ սփիւռքահայ հասակ առնող սերունդներուն համար: Սիմոնեան ապացոյց մը բերեց իր հանդիսութեան, երբ ներկաներուն ցոյց տուաւ հայ գրական-

նութեան ատենի գործածուած Յակոբ Օշականի «Համայնապատկեր» դասագիրքը, գոր գուրգուրանքով պահեր էր կէս դարէ աւելի...: Արփի Սիմոնեան յաջողեցաւ ներկաներուն մօտ արթնցնել տասնամեակներու հնութիւն ունեցող անոյշ յիշատակներ:

Երաժշտական ընդմիջումով մը հանդէս եկան Երկնային Տաղեր անունով ներկայացող սրնգահար Սայբի եւ մայրը՝ տաւրդահար Սօսի գոյգը: Հայկական երեք մեղեդիներով անոնք խանդավառեցին ներկաները, նոյն ատեն շքեղ փայլք մը տալով այլապէս ալ որակաւոր ընթացք առած հանդիսութեան:

Յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ ծանօթ ամուսնաբող եւ դերակատար Վարդուհի Քէշիշեան-Գոճայեանը, որ ապրումով եւ խոր մեկնաբանութեամբ ներկայացուց բանաստեղծին «Ոսկի Կամուրջ» դասական դարձած քերթուածը:

«Վահէ Վահեան եւ ժամանակակից հասարակական գործիչներ» նիւթին մասին արտայայտուեցաւ մեծարուող դաստիարակին նախկին ուսանողներէն՝ խմբագիր, դասախօս եւ հրատարակագիր փրոֆ. Օշին Քէշիշեան: Ան ծանօթ ըլլալով Վահէ Վահեանի տարիներու հասարակական գործունէութեան, ընդարձակ եւ պատրաստուած ելոյթով մը ներկայացուց գրողին սերտ եւ արդիւնաւէտ կապերը ատենի հասարակական գործիչներուն հետ, լոյս տեսած բազմաթիւ նամակներուն մեկնաբանութեամբ: Քէշիշեան անդրադարձաւ Հայաստանի ատենի գրողներուն եւ մտաւորականներուն հետ հաստատուած նամակագրութեան, շեշտելով որ անոնցմէ շատերը աշխատակցութիւն բերեցին Վահէ Վահեանի «Անի» գրական ամսաթերթին:

Հանդիսութեան վերջին խօսք առնողն էր բանաստեղծին Յովակիմեան-Մանուկեանի ուսանողներէն, ծանօթ հրատարակագիր Դոկտ. Մարգարէտ Մարկոսեան, որ սրտի խօսքով անդրադարձաւ ուսանողական տարիներու յուշերուն, ներկայացնելով ուսուցիչը եւ անոր հանդէպ ցուցաբերուած անօրինակ յարգանքն ու ակնածանքը:


Հանդիսութիւնը իր ամբողջութեանը մէջ յարգանքի, սիրով եւ պատկառանքի անկեղծ արտայայտութիւն մըն էր բոլորին կողմէ, ուղղուած Պէյրութի մէջ 1998 թուականին մահացած իննսուսամեայ կրթական մշակին, բանաստեղծին ու խմբագրին հանդէպ:

Յայտագիրը աւարտեցաւ կաթողիկէ համայնքի հովիւ Գրիգոր Վրդ. Շահինեան գնահատական խօսքերով եւ Տէրունական աղօթքով:

Այս շքեղ հանդիսութեան աւիթով պատրաստուած էր ութ էջոց կոկիկ յայտագիր-գրքոյց մը, ուր տեղ գտած էին Վահէ Վահեանի կենսագրականը, հրատարակած երկերուն ցանկը, իրեն ուղղուած վկայութիւններ, ինչպէս նաեւ հանդիսութիւնը նիւթապէս հովանաւորող նախկին ուսանողներու ցանկը: Հատորին վաճառքով գոյացած գումարը պիտի յատկացուի Պէյրութի Բարեգործականի վարժարաններու յաշտակութեան եւ գրականասէր հայ ուսանողներուն՝ Վահէ Վահեան կրթական հիմնադրամին միջոցով:

VA Print Media
 Book Printing • Hard Covers • Year Books
 Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
 Հին Գիրքերու Նորոգութեան Համար
 Հեռ.աձայնել՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
 1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
 626-354-5924 • vamedia@yahoo.com

«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՅԱՆՎԵՍԻ 13-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵԼԵԹՈՆ/ԴՐԱՍԱՐԱԿԱՐԸ \$146,000-Ի ՄՐՑԱՆԻՇԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՈՎ ԲԱՑԱՌԻԿ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿՈՒԵՑ



Կիրակի, Հոկտեմբեր 21-ին, 2012, կէսօրից յետոյ ժամը 5-ից մինչեւ կէս գիշեր անց ժամը 1-ը տեղի ունեցաւ «Քաջ Նազար» հանդէսի եւ Հայ-Ամերիկեան Հայաստանի հաշմանդամ եւ կարիքաւոր երեխաների օգնութեան ֆոնդի տարեկան 13-րդ թեյեթոն/դրամահաւաքը: Այդ հայանպատ նախաձեռնութիւնը սփռուեց 380, 381, 384 հայկական հեռուստաձգիչներէ կայաններէ:

Ձեռնարկի բացումը կատարեց արժ. Տ. Մամբրէ աւագ քահանան, որն թեմիս առաջնորդ Տ. Յովնան Ս. Արք. Տէրտէրեանի թարգմանը հանդիսանալով, օրհնեց ձեռնարկի կազմակերպիչներին եւ բոլոր մասնակիցներին, որոնք իրենց սրտաբաց նուիրատուութիւններով օժանդակում էին այս ազգօգուտ եւ աստուածահաճոյ աշխատանքներին:



Երեկոյի գլխաւոր խօսնակներ եւ հաղորդավարներն էին, կազմակերպութեան անդամներ, ասմունքող Նունէ Աւետիսեանը, արուեստագէտ Ստեփան Յովակիմեանը, հասարակական երիտասարդ գործիչ Յովիկ Գաբրիէանը, շնորհալի դերասան Արշալի Դարիբեանը, Վրէժ Սարեանը, հանրաժանօթ դերասան Ռաֆֆի Նաչատրեանը, Կլեմտէյլի Քաղապետական խորհրդի անդամ Արա Նաճարեանը, Գալիֆորնիայի Հայ երիտասարդների միութեան նախագահ Յարութիւն Յարութիւնեանը:

Մրազրի ամբողջ ընթացքում մերթ ընդ մերթ ելոյթ ունեցաւ «Քաջ Նազար»-ի եւ Հայ-Ամերիկեան Հայաստանի հաշմանդամ եւ կարիքաւոր երեխաների օգնութեան ֆոնդի հիմնադիր/տնօրէն Յովհաննէս Բալայեանը:

Դրամահաւաքի ընթացքում զնահատանքի խօսքերով հանդէս եկան դոկտ. Արամ Գարագաշեանը, դոկտ. Համբիկ Սարաֆեանը, նահանգային Գոնկրեսի թեկնածու Կրէկ Գրիգորեանը, վաստակաւոր

Երկու տասնեակ պատանիներ, երիտասարդ-երիտասարդուհիներ դրամահաւաքի սկզբնական ժամերից մինչեւ վերջ մնացին հեռա-

խօսների մօտ եւ պատասխանեցին հազարաւոր նուիրատուների զանգերին եւ գրի առան նրանց հասցէները:

Դրամահաւաքի ողջ տեւողութեան, AMGA 380 հեռուստակայանը այցելելով ելոյթներ ունեցան մի քանի տասնեակ անուանի արուեստագէտներ՝ Ռազմիկ Մանսուրեանը, Պապին Պողոսեանը, Սալբի Մայիլեանը, Յովհաննէս Շահբազեանը, Ռուբէն Թելուցը, Արմէն Յովհաննիսեանը, Արթուր Մադոյեանը, Գէորգ Չաքմանեան, Աֆօ Նազարեանը եւ տաղանդաւոր քամանչահար Վլադիմիր Գրիգորեանը:

Ութը ժամերի ընթացքում, դրամահաւաքին մասնակցեցին շուրջ 2000 ընտանիքներ Գալիֆորնիայի եւ Ամերիկայի տարբեր նահանգներից, որոնցից մի մասը հեռախօսով, մի մասն էլ անձամբ ներկայացան եւ նուիրատուութիւն կատարեցին, որի արդիւնքում գոյացաւ 146 հազար դոլար, ներառեալ խոստումները:

Նշելի է, որ դրամահաւաքին յատկացուած դահլիճը բազմազան ծաղիկներով զարդարուած էր:

Դրամահաւաքը յատկանշող նպատակ եւ գաղափարի որպէս սիմվոլ, Արարատի մարզի Դալար գիւղի դպրոցի 14 հազար քառակուսի ոտք տարածութիւն ունեցող, 2-յարկանի, 28 դասարաններից բաղկացած համայնապատկերը տեղադրուած էր: Շէնքի աւարտումից յետոյ, այնտեղ պիտի տեղադրուեն 220 ծնողազուրկ երեխաներ:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս դրամահաւաքի կամաւոր աշխատակիցներին եւ հիւրերին առատ եւ բազմազան ուտելիքներ մատուցեցին, արդէն մեծ ժողովրդականութիւն վայելող, հանրաժանօթ Raffi's Place, ինչպէս նաեւ Glendale Pizza Man (տնօրէնութեամբ Գառնիկի) հայկական հաստատութիւնները առատօրէն գոհացուցին յատկապէս երիտասարդներին:

Այս տարուայ դրամահաւաքը անգամ մը եւս ապացուցեց որ մեր ժողովուրդը պատրաստ է օգնելու Հայաստանի կարօտեալ երեխաներին, եւ սատար հանդիսանալու մեր կազմակերպութեանը, որպէսզի հնարաւորութիւն ունենանք շարունակելու մեր սրբազան առաքելութիւնը: Շու-

տով պիտի սկսուեն Դալար գիւղի դպրոց-մանկապարտէզի վերանորոգչական աշխատանքները, որոնց մասին հանրութեան կը ներկայացուեն անհրաժեշտ տեղեկատուութիւնները, ընդունուած կարգի համաձայն:

Տեղին է յիշել, որ Հայաստանի ծնողազուրկ հաշմանդամ երեխաների ֆոնդի միջոցով եւ գաղութիս նուիրեալ ազգայիններ Յարութ եւ Բախշիկ Բրուտեանների առատաձեռն նուիրատուութեամբ լրիւ վերանորոգուեց Հայաստանի սահմանամերձ գիւղերից Պառաւաքարի դպրոց մանկապարտէզը եւ յանձնուեց նոյն գիւղի մանուկներին:

Մեծ նուիրատուութիւնների շարքում պիտի նշել անունները, ազգային-հասարակական մեծ գործիչ, Հայաստանի ծնողազուրկ հաշմանդամ երեխաների հիմնադրամի ամենաալեհեր (93 տարեկան) պատուոյ անդամ Գրիգոր Այվազեանի եւ նոյնպէս պատուոյ անդամներ իր գաւակների՝ Հերրի, Լեւոն եւ Մարալ Այվազեաններին, որոնք թեյեթոնից օրեր առաջ 10,000 դոլարով (ինչպէս ամէն տարի) կատարեցին իրենց մարդասիրական պարտականութիւնը:

Իսկ 13-րդ թեյեթոնի առաջին բացման նուիրատուութիւնը, ըստ իր սրտաբուխ առաջարկի կատարեց, գաղութիս հանրաժանօթ Paris Design ոսկերչատան տէր եւ տնօրէն Ջորջ Դադանեան եւ իր ազնիւ կողակից Սալբին՝ 2000 տոլարով:

Մեծ ուրախութեամբ պիտի յայտնել, որ այս տարուայ 13-րդ թեյեթոնից օրեր առաջ եւ ընթացքին, շօշափելի գումարներով մասնակցեցին ազնուահոգի հայրենակիցներ, որոնց խոնարհաբար շնորհակալ ենք:

5000 դոլարի գումարներով իրենց մասնակցութիւնը բերեցին դոքտ. Ռոբերթ Միլիթարեան, Յարութ Բրուտեան, դոքտ. Վահան Ալադադեան, Նիք Նշանեան, Արա Բաբայեան եւ երեք հայրենակիցներ, որոնք չցանկացան իրենց անունները յայտարարել:

Ի խորոց սրտի շնորհակալութիւններ 13-րդ թեյեթոնի բոլոր մասնակիցներին, որոնք մարդասիրական ազնիւ հոգիով մաս կազմեցին Դալար գիւղի մանկատան-դպրոցի հսկայածաւալ շէնքի նորոգման ազնիւ գործին:



VISIT YOUR APP STORE AND DOWNLOAD FREE

THE FIRST ARMENIAN NEWS OUTLET APP AVAILABLE FOR ALL YOUR DEVICES



★ 2012 OFFICIAL ENDORSEMENTS



PRESIDENT
Barack Obama



U.S. SENATOR
Dianne Feinstein

TUESDAY, NOV. 6

Make a Plan to Vote in the 2012 Presidential Election!

Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հրապարակեց յառաջիկայ Նոյեմբեր 6-ին տեղի ունենալիք ընտրություններուն առթիւ իր գորակցութիւնը վայելող թեկնածուներու ցանկը: Այս թեկնածուներ հանդիսանան Հայ համայնքի բարեկամները ու կը հետապնդեն հայութիւնը յուզող հարցերը:

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 12-րդ ընտրաշրջանէն Նէնսի Փրլօսի

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 14-րդ ընտրաշրջանէն Ջէքի Սպիր

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 18-րդ ընտրաշրջանէն Աննա Էշու

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 22-րդ ընտրաշրջանէն Դեվին Նունյեզ

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 27-րդ ընտրաշրջանէն Ջուլի Զու

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 28-րդ ընտրաշրջանէն Ադամ Շիֆ

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 29-րդ ընտրաշրջանէն Թոնի Քարդենաս

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 30-րդ ընտրաշրջանէն Պրեդ Շըրման

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 32-րդ ընտրաշրջանէն Գրեյս Նափօլիթանօ

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 33-րդ ընտրաշրջանէն Հենրի Ուաքսմըն

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 34-րդ ընտրաշրջանէն Հավիեր Բէտերթա

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 37-րդ ընտրաշրջանէն Քէրըն Բասս

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 38-րդ ընտրաշրջանէն Լինդա Սանչէզ

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 39-րդ ընտրաշրջանէն Էդ Բոյս

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 43-րդ ընտրաշրջանէն Մեքսին Ուաթըրզ

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 46-րդ ընտրաշրջանէն Լորէթա Սանչէզ

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 48-րդ ընտրաշրջանէն Դէնա Բոհրթաթըր

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 49-րդ ընտրաշրջանէն Դէրը Այսա

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 52-րդ ընտրաշրջանէն Բրայըն Բիլքրօյ

Ներկայացուցիչներու Տան անդամ՝ 53-րդ ընտրաշրջանէն Սուզըն Դէվլըս



Նահանգային Խորհրդարանի 12-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Ֆրեզնոյի մօտակայ քաղաքները՝ Հանրապետական ԶԻՄԹԻՆ OLUCL

Նահանգային Խորհրդարանի 35-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Սանթա Պարպարա եւ մօտակայ քաղաքները՝ Նախկին Լիբանանահայ եւ հանրապետական ԽԱԶԻԿ ԱՇՃԵԱՆ

Նահանգային Խորհրդարանի 39-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Սան Ֆերնանտօ Դոլիտի արեւելեան մասը, Նորթ Դոլիտ, Սանլանտ Թահունկա՝ Դեմոկրատ ՌԱՌԻԼ ՊՈՔԱՆԵԿՐԱ

Նահանգային Խորհրդարանի 41-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Փասատինան եւ մօտակայ քաղաքները՝ Դեմոկրատ ԶԻՄ ԳՈԼՏԸՆ

Նահանգային Խորհրդարանի 43-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Կլենտէլ, Պըրպէնք եւ մօտակայ հայաշատ շրջանները, Դեմոկրատ՝ ՄԱՅՔ ԿԱԹՕ

Նահանգային Խորհրդարանի 46-րդ ընտրաշրջանին մէջ, որ կ'ընդգրկէ Կան Նայգ, Շըրմըն Օքս, Թոլուքա Լէյք Նորթ Դիլզ եւ մօտակայ այլ շրջաններ՝ Դեմոկրատ ԱՏԻՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Հայ Ամերիկեան Խորհուրդը կոչ կ'ընէ Նոյեմբեր 6-ին ներկայանալու քուէատուվի եւ նախագահական ընտրություններուն զուգահեռ քուէարկել վերոյիշեալ թեկնածուներուն:

Massis Weekly

Volume 32, No. 40

Saturday, November 3, 2012

SDHP 125th Anniversary Academic Conference Major Success



Participating scholars and organizing committee members

BURBANK, CA -- To mark the 125th anniversary of the Social Democrat Hunchakian Party (SDHP) over 200 participants attended an academic conference with 11 prominent historians titled, "Social Democrat Hunchakian Party Throughout History." The con-


ference, which was hosted by Woodbury University on Oct. 27, was organized by the Nor Serount Cultural Association and the Armenian Educational Benevolent Union with co-sponsorship by the Richard G. Hovannisian Endowed Chair in Modern Armenian

History at UCLA [established by the Armenian Educational Foundation], the Armenian Research Center at the University of Michigan, Dearborn; and the National Association for Armenian Studies and Research (NAASR). The academic conference is a part of a series of events to celebrate 125 years of the party's contributions to the Armenian people, Armenian Cause and strife.

Harut Der Tavitian (Chairman of the Nor Serount Cultural Association) presented the opening remarks for the conference, with over 700 followers online via live webcast, welcoming the audience, including dignitaries such as H.E. Archbishop Hovnan Derderian, Primate; Archbishop Vatche Hovsepian, former Primate; Reverend Joseph D. Matossian, Armenian Evangelical Union; the Honorable Grigor Hovhanissian, Consul General of the Republic of Armenia in Los Angeles along with Consul of the Re-

Continued on page 4

Hassan Cemal's Book on Armenian Genocide is a Bestseller in Turkey



ISTANBUL -- Prominent Turkish journalist Hasan Cemal's latest book titled "1915: Armenian Genocide," which was published last month, has become a bestseller in Turkey, Today's Zaman daily's columnist writes in his article.

Continued on page 4

Mediators Urge Way Out Of Karabakh Deadlock

PARIS -- International mediators proposed unpublicized ways of kick-starting the stalled Nagorno-Karabakh peace process during renewed Armenian-Azerbaijani negotiations that were organized by them in Paris over the weekend.

Armenia's and Azerbaijan's foreign ministers met in the presence of the U.S., Russian and French diplomats co-chairing the OSCE Minsk Group for the first time since an international scandal sparked by the release from prison of an Azerbaijani army officer who hacked to death an Armenian colleague in Hungary.

"The Co-Chairs stressed to the Ministers the importance of reducing tensions among the parties. They presented their ideas on a working proposal to advance the peace process," the mediating troika said in a statement

issued on Sunday.

"The Foreign Ministers reiterated their determination to continue working with the Co-Chairs to reach a peaceful settlement. The Ministers and the Co-Chairs agreed to a further discussion of these ideas during the Co-Chairs' visit to the region in November," said the statement.

The foreign ministries in Baku and Yerevan issued virtually identical statements on the Paris talks.

It was not clear if the mediators' proposal relates to confidence-building measures in the conflict zone or the essence of their draft framework peace accord submitted to the conflicting parties last year. The latter disagree on some key details of the proposed Basic Principles of resolving the Karabakh

Continued on page 4

Armenia's Population Declined by 194,157 Since 2001

YEREVAN -- The preliminary records of the 2011 census reveal that Armenia's population has decreased by 194,157 over the past 10 years, according to Karine Kuyuumjyan, the head of the National Statistical Service's Census and Demography Department.

"The rural population makes up 36.7 % and the urban population – 63.3% of Armenia's permanent population," she told reporters Wednesday, noting that the major part of the urban residents (55.5%) are registered in capital Yerevan.

The census records are subject to further changes. Preliminary estimates suggest that Armenia's population in 2011 was 2,871,771, with the number of permanent residents being 3,018,854. Of the regions, Armavir with 265,770 permanent residents, proved to have the highest population records.

The most sparsely populated region was Vayots Dzor where only 52,324 of the 47 659 registered people turned out to be permanent residents.

The final results of the 2011 census are due in 2013.

7 Armenians Kidnapped in Syria Aleppo's St Kevork Church Burned Down



Seven ethnic Armenians have been kidnapped near the war-stricken Syrian city of Aleppo, local Armenian sources and the Foreign Ministry in Yerevan said on Tuesday.

A spokesman for a Syrian diocese of the Armenian Apostolic Church, Zhirayr Reisian, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) that they as well as three other individuals were stopped and forced off a bus on their way from Lebanon's capital Beirut to Aleppo on Monday.

Armenia's Foreign Ministry identified five of those Armenians as Garo Pampalian, Arsen Aroian, Levon Zeitunian, Bashar and George Rabat and said it is trying to clarify the others' names. The ministry said their whereabouts remain unknown.

The kidnapping was most probably the work of Syrian rebel groups fighting forces loyal to the beleaguered President Bashar al-Assad.

The incident was reported two days after Sourp Kevork (Saint George) Armenian Apostolic church in Aleppo was seriously damaged by fire. There was no indication that the church was specifically targeted.

The Sourp Kevork church is located in the district of Nor Kyugh, scene of continuing fighting between the Syrian army and rebels. The Mesrobian Armenian school adjacent to the church has been seriously damaged, too.

Earlier on Monday a blast near an Armenian district of Syrian capital Damascus reportedly killed 10 people and wounded around 50. The Jaramana district blast has killed two Armenians—Rana Salhap Kaladjian and Rana Nanouf Mehmedjian. An Armenian, by the name of Anoush Apovian, was injured, but, after being administered first aid, she was discharged from hospital.

HyeAID Charity Concert to Assist Syrian Armenians Set for November 11



PASADENA — The ongoing critical situation in Syria has placed the subsistence of Syrian Armenian population in jeopardy. As they struggle to live through a very difficult situation, life for us Americans and particularly those living in Southern California seems to continue as before. Let us unite and help as one heart and one soul.

The Syrian Armenian Relief Fund, in association with Artists for Kids, has organized a charity concert to be held on November 11, 2012, at 7 pm, at the Pasadena Civic. Armenian artists are coming together to do their part to raise awareness for the needs of the Syrian Armenians; Southern Californians can make their way to Pasadena and show their support for the Syrian Armenians.

Serj Tankian and his father Khatchadour Tankian will be performing, along with Ruben Hakhverdyan, Arto Tunchboyachiyani, Lilit Pipoyan (from Armenia), Armen Movsisyan, Vicken Tarpinyan (from France), Sebu Simonian, Element and Viza bands, The Dirty Diamond, Hi-Am Quartet, and others. The variety of musical

styles will satisfy all who appreciate music as a means to reach and touch hearts, who care about the well being of other human beings.

The concert grand sponsors are Karoun Dairies in Sun Valley, and Vahan and Anoush Chamlian Armenian School in Glendale.

Tickets are available from on-line outlets and by telephone, itsmyseat.com/HyeAid, 855-4HyeAid (855-449-3243) and Ticketmaster.com. Arpi Barsoumian can be reached at 818-500-9997 or 626-255-2683 regarding tickets as well.

The fundraising for the Syrian Armenians is ongoing. Last August, an Executive Committee was set up by ten churches, charity and leading organizations operating in the Western U.S.A. in order to conduct fundraising. The Executive Committee of the Syrian Armenian Relief Fund already transferred \$100,000, from the raised funds, to assist the Armenian population in Syria.

www.SyrianArmenianReliefFund.org
Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948.

U.S. Navy Chief Discusses Growing Defense Ties With Armenia



U.S. Secretary of the Navy Ray Mabus and Armenia DM Seyran Ohanian

YEREVAN -- Defense Minister Seyran Ohanian and the visiting U.S. Secretary of the Navy Ray Mabus praised growing military cooperation between Armenia and the United States after holding talks in Yerevan on Monday.

Both men said defense links between their nations will continue to deepen in the coming years. Mabus announced in this context that the U.S. Marine Corps subordinate to him plans to train more Armenian military personnel through joint exercises.

"The United States Marine Corps reporting to the secretary of the Navy helps to explain why the secretary of the navy comes to a country with no ocean," he told a joint news conference during what was the first-ever

visit to Armenia by a U.S. Navy and Marine Corps chief.

"The American Navy and the American Marine Corps have been glad to work with the Armenian Armed Forces on the defense strategic planning and on exercises that we have conducted together over the past two years," Mabus said. "And we are planning for more of these in the future."

Mabus revealed that U.S. Marines have held "a number of" such drills with the Armenian army this year through their Black Sea Rotational Forces. "Part of that was focused on the development of a highly capable and highly professional non-

Continued on page 4

Armenian-Iranian Power Plant Construction Set To Start



YEREVAN -- The repeatedly postponed construction of a big hydroelectric plant on the Arax river marking Armenia's border with Iran will finally start next month, the energy ministers of the two neighboring states said on Thursday.

Energy Minister Armen Movsisian and his Iranian counterpart Majid Namjou made the announcement after wrapping up a two-day session of an Armenian-Iranian inter-governmental commission on economic cooperation in Yerevan.

"At Mr. Namjou's proposal, within the next 10-15 days we will hold the inauguration ceremony and the construction of the Meghri plant will get underway," Movsisian told a joint news conference. He said Namjou has personally helped to speed up the implementation of the project estimated to cost at least \$330 million.

The Armenian and Iranian governments agreed to build the 130-megawatt facility about a decade ago but have not succeeded in getting the project off the drawing board until now. Movsisian announced the impending start of its construction by Iranian firms in July 2010. He later blamed

"situations in Iran" for the delay.

Armenian and Iranian officials announced a new date for the launch of the project -- late August -- after Namjou's previous trip to Yerevan in June this year.

According to Armenian Energy Ministry sources, an Iranian company will build the plant and use all electricity generated by it at will for 15 years. The facility will then become property of Armenia, the sources told RFE/RL's Armenian service.

Namjou complained about the repeated delays in the realization of this and other Armenian-Iranian energy deals, including the construction of a fuel pipeline, at the start of the commission meeting on Wednesday. He said on Thursday that he proposed that two sides set up a joint task force that would monitor the implementation of Armenian-Iranian agreements and quickly deal with emerging obstacles.

"I think that the creation of such a task force would greatly contribute to the implementation of those agreements," the Iranian minister told journalists. He said the Iranian government is ready to host the first meeting of that panel in Tehran soon.

IRNA: Armenian Pavilion in the Center of Attention in Tehran Media Exhibition.

Armenia is willing to deepen its relations with Islamic Republic of Iran. Armenian-Iranian relations in cultural, economic, political and social spheres are on a high level. Iranian news agency cited its interview with Armenian extraordinary and plenipotentiary Ambassador to Iran Grigor Arakelian taken during his visit to the 19th Media and news agencies exhibition hosted in Tehran. Armenpress reports, Ambassador noted that the economic relations of the two countries have recorded a great development during this year.

Referring to the media exhibition Arakelian highlighted that it was an important cultural event which provided the representatives of news agencies to have a face-to-face communication. Iranian daily underlined that Armenian pavilions was catching the eye of the participants and the visitors of the exhibition. In the Tehran media exhibition Armenian is represented by Armenpress news agency. Agencies from Russia, Kazakhstan, Turkey, Jordan, Switzerland and other countries participated in the 19th exhibition of Media and News agencies.

Iranian Tourist Inflow to Armenia Seen Falling in 2012

After years of rapid growth, the number of Iranian tourists visiting Armenia appears to have fallen significantly this year amid an increasingly adverse impact of international sanctions on Iran's economy.

In recent years, Armenia has become a major travel destination for Iranians attracted by its more liberal environment and proximity. According to Armenian government data, more than 134,600 of them visited Iran's sole Christian neighbor last year, up from some 120,860 in 2010. The influx was particularly visible in March, during two-week celebrations of Nowruz, the Persian New Year.

Historian Taner Akçam Presents His New Book: "The Young Turks' Crime Against Humanity"



Taner Akçam presenting in his new book

NEW YORK -- The groundwork for the Armenian Genocide of 1915 was laid in a carefully worked out demographic policy implemented by the Ottoman government, argues historian Taner Akçam in his new book "The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire."

Professor Akçam—an international authority on the Armenian Genocide, and one of the first Turkish academics to acknowledge and openly discuss it—introduced his book at the Diocesan Center in New York on Thursday, October 18, during an evening co-sponsored by the Eastern Diocese and other Armenian organizations.

Peter Balakian, the leading public voice of Armenian Genocide advocacy and the author of several books on the subject, introduced Professor Akçam last Thursday.

Mining some 600 documents from the Ottoman archives—many of them previously unstudied—Professor Akçam outlines how the Ottoman government aimed to reshape the population of the empire in the wake of the Balkan War of 1912-13. He argues that the ruling Committee of Union and Progress, having suffered large territorial losses in the Balkan War, concluded that tolerating the empire's Christian minority—which made up 30 percent of the total population—would lead to the unraveling of the Ottoman state.

In response, the CUP embarked on a policy of resettling and assimilating Christian families to ensure that the Christian population in a given town or village would not exceed 5 to 10 percent of the local Muslim population. This policy, Professor Akçam said, was closely tied to the notion that the Christian minority posed a serious threat to the empire's existence. "The impetus was less about a well-developed ideological mindset, and more about anxiety about security," he said.

According to Professor Akçam, this new research expands the understanding of genocide by shedding light on social engineering practices designed to strip Christian minorities—especially the Armenians—of their identity. It shows that "genocide is broader than the mere physical destruction and

annihilation of a group of people," Professor Akçam said.

Of course, ultimately, the homogenization policy became just that. By the spring of 1915, the Committee of Union and Progress gave up its resettlement policy and turned to the more familiar destruction of the Armenian population—killing orders, massacres, and desert death camps.

տահած որ Գէորգը ունէ մէկուն մասին ժխտական բան մը ըսէ: Միշտ դրական բան մը ունի ըսելիք նոյնիսկ ամենագէջ մարդոց մասին: Բամբասանք՝ երբեք, գովասանք՝ միշտ: Այսօր, երբ հաւաքուած ենք հոս մեր յարգանքը մատուցանելու այս մեծ ուսուցիչին, ես որպէս 43 տարուայ ուսուցիչ եւ տնօրէն կը խոնարհիմ Գէորգ Յակոբեանի, այս բարի ուսուցիչին սքանչելի վաստակին առջեւ: Այսօր, բազմահազար իր աշակերտները սիրով եւ յարգանքով կը յիշեն իրենց սիրելի ուսուցիչին եւ ընկերային թէ այլ հաւաքոյթներու ժամանակ կարօտով եւ անուշ լիշատակներով կը փորձեն զիրար գերազանցել պ.Յակոբեանին գովքը հիւսելու: Գէորգին պաշտօնակիցներն ու ընկերները միշտ կը յիշեն իր քաղցր ժպիտը, իր ազնիւ բնաւորութիւնը, չափազանց քաղաքավարութիւնը, օգնելու անշահախնդիր պատրաստակամութիւնը, անձնագոհութիւնը եւ ընկերային ջերմ վերաբերմունքը: Ես այնքան ուրախ եմ եւ հպարտ, որ Գէորգին պէս քննեկալ մը, պաճանախ մը, ունիմ: Վարձքդ կատար, սիրելի ուսուցիչ»:


Ապա Լարա Գայայեան հրաւիրեց պ.Յակոբեանը եւ Սանուցի վարչութիւնը, որպէսզի մեծարեալին չանձնուէր օրուան պատշաճ յուշատախտակը: Եւ որովհետեւ ամէն մեծ այրի ետին կայ մեծ կին մը, հրաւիրուեցաւ նաեւ տիկ. Սիլ-

Շար.ը էջ 23

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ՅՈՒՇԱՐԶԱՆ

ՈՒՍՈՒՅՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ



Սրտաբույս նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝

(626) 797-7680 կամ **(818) 429-2322** քիւերուն

Լարակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնի կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատմը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաքաղը:

ԿՈՉ ՍԱՅՎԿԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ ՍԱՆ-ՍԱՆՈՒԴԻՆԵՐՈՒՆ

Բազմավաստակ տնօրէն Բենիամին Ժամկոչեանի սան-սանուհիներէն անոնք որոնք Սահակեան Բարձրագոյն Վարժարանի կապակցութեամբ լուսանկարներ ունին իրենց մօտ, թող բարի ըլլան հեռաձայնել հետեւեալ քիւերուն:

(818) 429-2322 Տիկ. Վարդուհի Գազանճեան
(626) 422-9121 Տիկ. Արուսեակ Գրիգորեան

15th International Armenia Fund
Telethon 2012
 November 22 Thanksgiving Day



OUR VILLAGE

Armenia Fund's International Thanksgiving Day Telethon will raise funds to build Multifunctional Community Centers in **Armenia** and **Artsakh** and to provide assistance to **Syrian Armenians** in distress.

City-State-Region	Station	Digital Channel	Cable Channel	Satellite	Time
Northern California San Francisco & Bay Area	KTSF Channel 26	26.1	AT&T U-VERSE Channel 8 CHARTER Channel 98 COMCAST Channel 8	DIRECTV 893 DISH 26 or 8237	8am-7pm PST
Central California Fresno & Central California	KGMC Channel 43	43.5	COMCAST Channel 200		8am-8pm PST
Southern California Greater Los Angeles Area	KVMD Channel 23	23.1, 31.1	AT&T U-VERSE Channel 23 VERIZON FiOS Channel 23 CHARTER Channel 21 or 29 COX Channel 31 or 64 TIME WARNER Channel 9,17, 20, 21, 23, 28, 29, 29 or 48	DIRECTV 31 DISH 31	8am-8pm PST

For all other locations please tune in to our live webcast at

8:00am-8:00pm PST

webcast www.ArmeniaFund.org



1-800-888-8897



Designed by: AniDesign.com

twitter.com/ArmeniaFund
facebook.com/ArmeniaFund
YouTube.com/ArmeniaFundUS

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԼԲ. ՀԱՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՐԱՆԴԵՍԸ ԵՐԵՒԱՆԻ ՍԷՋ

ՄԱՐԴԱՍԵՐ ՄԱՐԴԸ

Հայկազեան Հայագիտական Հանդէսի ԼԲ. Հատորի շնորհահանդէսը տեղի ունեցաւ 10 Հոկտեմբեր 2012-ին, Երեւանի Պետական Համալսարանի Սփիւռքագիտութեան Ամպլիոնի աջակցութեամբ, Բանասիրական Բաժանմունքի հանդիսասարահին մէջ, ներկայութեամբ շուրջ վեց տասնեակ մտաւորականներու, Համալսարանի դասախօսներու, Հանդէսի աշխատակիցներու, հին ու նոր բարեկամներու, հայագէտ գործիչներու, մամուլի ներկայացուցիչներու եւ բարձր կարգերու ուսանողներու:

Շնորհահանդէսին բացումը կատարեց Հանդէսի Պատասխանատու քարտուղար Դոկտ. Անդրանիկ Տազխանյանը, բարի գալուստ մարտիչներով ներկայներուն, ապա խօսքը տուաւ Սփիւռքագիտութեան Ամպլիոնի վարիչ, Փրոֆ. Երկրի Աւետիսեանին, որ շուրջ տաս վայրկեանի ընթացքին համապարփակ ներկայացուց Հանդէսի ԼԲ. թիւը: Ան մատնանշեց, որ Սփիւռքի հայագիտական մամուլին մէջ Հանդէսը հետեւողականօրէն ու առանց ընդմիջումի կը շարունակէ իր ընթացքը, եւ ցաւ յայտնեց որ

Բազմավէպն ու Հանդէս Ամսօրեան տեղափոխուած են Երեւան, Հալէպի Տաթևի ճակատագիրը կը մնայ անորոշ, իսկ Հասկ Հայագիտական Տարեգիրքը միշտ չէ որ կը յաջողի յարգել տարեկան իր պարբերականութիւնը:

Իր խօսքին մէջ, Բանասիրական Բաժնի Հայոց Լեզուի Ամպլիոնի դասախօս Փրոֆ. Ռուբէն Սաքապետոյեան գնահատեց
Հանդէսը եւ անոր իմբազարակազմը: Ան գովասանքով անդրադարձաւ լիբանանահայ գաղութի հայապահպանման ճիգին ու հայկականութեան, ընդգծեց Հանդէսով դրսեւորուող «եռանդը, ջանքն ու աշխատանքը», եւ աւելցուց որ Սփիւռքին ծանօթ մարդիկ կրնան «միայն ապշիլ որ Սփիւռքեան սուղ պայմաններու մէջ նման արժէքաւոր բովանդակութեամբ հատորներ» լոյս կ'ընծայուին: Ապա կատարեց կարգ մը մատնանշումներ, եւ փափաք յայտնեց տեսնել տեսական լեզուաբանութեան եւ հայերէնագիտութեան նիւթեր՝ Հանդէսին մէջ:

Խօսք առաւ նաեւ ԵՊՀ Հայոց Լեզուի Ամպլիոնի դասախօս Դոկտ. Նարինէ Դիլբարեան, որ նկատի առաւ սուրիահայ գաղութին ճգնաժամը եւ աւելի շեշտաւորեց կարեւորութիւնը Հանդէսի դերակատարութեան, դրանց գնահատեց Արցախի ներկայութիւնը հատորին մէջ, եւ թելադրեց որ աշխատանք տարուի որ Հանդէսը կապ ունենայ նաեւ Ռուսաստանի հայագիտական շրջանակներուն հետ: Դիլբարեան այս առաջարկով կ'ուզէր աւելի ամուր «հայկական-հայագիտական պարիսպ բարձրացնել»: Իր խօսքին մէջ, գրականագէտ, Փրոֆ. Սուրէն Դանիէլեան մատնանշեց Հանդէսին մէջ արծարծուած նիւթերուն կարեւորութիւնը, եւ առաջարկեց, որ Հանդէսը անդրադառնայ նաեւ Հայաստանի Համարապետութեան ժամանակակից պատմութեան: Խօսք առաւ նաեւ ՀՀ Ազգային Ակադեմիայի Հայագիտական Բաժնի վարիչ Փրոֆ. Վլադիմիր Բարխուդարեան, որ շեշտեց, թէ «ձուլումը ուժեղանում է Սփիւռքում, եւ մենք տաղանապում ենք սիրիահայութեան խնդրով ու պէտք

է յատուկ վերաբերմունք ցուցաբերենք Սփիւռքի հայկական իրագործումներին»: Ան աւելցուց որ «յաճախ հաշուի չենք նստում թէ ինչ պայմաններում են իրագործուում դրանք»: Փրոֆ. Բարխուդարեան ըսաւ, թէ ամէն անգամ որ հատորը ձեռք կ'առնէ «ուրախութեամբ եմ ծանօթանում նիւթերին» եւ շեշտեց՝ «ամէնից կարեւորը որ որակը չի ընկնում, նրանք պահում են մնայուն որակը: Ինձ հիացրեց նրանց խստապահանջութիւնը, - եւ թելադրեց, - օժանդակել Հանդէսին որ այժմ միջազգային հարթակում լաւագոյններից մէկն է: Գոհ է մեր մտաւորականութիւնը ձեր աշխատանքից. շարունակեցէք նոյն որակով»:

Խօսք առաւ Բանբեր Երեւանի Համալսարանի իմբազար Դոկտ. Հր. Միրզոյեանը, որ կատարեց շարք մը առաջարկներ:

Ան առաջարկեց փոքրացնել Հանդէսին էջաքանակը, օրինակ բերելով Բանբեր Երեւանի Համալսարանին: Ան հիմնաւորեց իր կրճատման առաջարկը մատնանշելով, որ դժուար է մշտապէս որակաւոր յօդուածներով մեծածաւալ հատոր հրատարակել ու նշեց որ «մենք ենք խախտում մեր դրած չափերը»՝ նկատի ունենալով յօդուածի ծաւալի հարցերը: Ան ընդգծեց որ «արտակարգ հարուստ է Հանդէսի հրատարակումների բաժինը», գնահատեց մահագրականներու բաժինը, որ հայաստանեան հայագիտական մամուլին բաղդատութեամբ բացառութիւն է, ու շեշտեց որ Հանդէսի հատորներու մահագրականներու մէկտեղում մը, հայագէտներու իւրօրինակ կենսագրական բառարան մը կը հանդիսանայ: Հոսկ, ան «բացառիկ» գնահատեց ԼԲ. Հատորը իր ընդգրկունութեամբ: Միրզոյեան անդրադարձաւ նաեւ սփիւռքահայ հայագէտներու աճման խնդրին եւ հարցադրեց հայագիտութեան խթանման ընթացքը Սփիւռքի մէջ: Դասախօս Փրոֆ. Վազգէն Գաբրիէլեան իր կարգին առաջարկեց, որ յօդուածները «քիչ մը սեղմել է պէտք»: Ան եզրափակեց իր խօսքը հաստատելով, որ «մեծ գործ էք անում համահայ հանդէս դառնալու» ճամբուն վրայ: Եղան այլ ելույթներ եւ հարցադրումներ եւս: Խօսք առին նաեւ հալէպահայ բանասէր Վարդի Քէշիշեանը եւ Խօսնակ Ամսագիրի իմբազար Համբիկ Մարտիրոսեանը: Բոլորը գնահատեցին եւ իրենց անձնական օրինակներով հաստատեցին Հանդէսի խստապահանջութիւնը, բժախնդրութիւնը: Վերջապետութեան խօսք առաւ Դոկտ. Տազխանյան, եւ անդրադարձաւ կատարուած առաջարկներուն: Ան մատնանշեց որ Հայկազեան Հայագիտական Հանդէսի իմբազարակազմը հայագիտութիւնը կ'ըմբռնէ իր լայն սահմանումով եւ օրինակներ բերաւ ժամանակակից նիւթերու Հանդէս ընդգրկման առումով:

Ան յայտնեց որ Հանդէսի վերջին երկու հատորներն ու մատենագիտութիւնը արդէն գետեղուած են համացանցային կայքի վրայ, եւ թէ աշխատանք կը տարուի որ Հանդէսի բոլոր հատորները այնտեղ գետեղուին շուտով: Ան իր կարգին մտահոգութիւն յայտնեց սփիւռքահայ հայագէտներու աճեցման

ՋԱՆԻՐԵԿ ԶԱՆԻՐԵԿԵԱՆ (ԿՈՇԵՑԻ)

Նուիրում եմ հանգուցեալ բժիշկ՝ Յակոբ Զաք Սարգսեանին ու նրա կողմից թողնուած աւանդոյթները շարունակող՝ աւանդապահ ու մարդասէր փոխարինողին:

Անսովոր յայտնութիւն չլինելով իսկ տիրութիւնն իր տեղն է անում, ցաւեցնում հոգիս, երբ ափսոսանք օրօրելով եմ վկայելու, թէ ինձանից 25 տարով փոքր տարիքն ունեցող՝ թերապետ բժիշկ՝ Յակոբ Զաք Սարգսեանի բժշկարանում շարունակաբար երկու տասնամեակ բուժում ստացող հիւանդներից մէկն էլ ես եմ եղել, եւ նրա կողմից մշտական բժիշկ-մարդասէրի հոգատար վերաբերմունք ցուցաբերելն ինքնին առաւել օգտակար դարման համարելով նաեւ հոգեւին էր ապրեցնում...

Մակայն ի ցաւ՝ 2011 մարտի 1-ին, իր ապրելիք կեանքի օրերը պակաս թողեց...

Անգամ բարութեամբ լի աչքերը մէկընդմիջտ փակելուց առաջ հասու էր եղել մարդկանց չվտանգել եւ աւտոմեքենայի դեկին տիրելով էր մօտեցել մայրի... ու նոր միայն սրտի թիկ-թակերը ընդհատուել էին...

Ասել է, թէ յարգուած մարդ-բժիշկն ինչպէս իր օճախում, այնպէս էլ բժշկարանում ու շրջապատում մարդկանց սրտում յենակ դնող մէկը լինելով անցաւ յաւիտեանական հանգստի...

Եւ այս օրինակ տխուր իրականութեան հետ, իսկապէս ո՞վ կարող էր ասել, թէ կարելի է մի քիչ հեշտ հաշտուել, որ մէկն էլ ես լինեմ...

Այո, տարեց մէկը լինելով, անշուշտ, պէտք զգացուելիս եւ յարգալից մօտեցում ցուցաբերող բժիշկների կողմից յայտնաբերուած հիւանդութեան համապատասխան դեղորայք ստանալ օգտուելուց վեր՝ երեւոյթ եմ կարծել վերոյիշեալ թերապետ բաժանմունքի բժիշկ-տնօրէնի հուլիան մէջ ի տես մօտեցումն արդար...

Ու թէ, ասացի, որ ի տես էր բանը, բայց ո՛չ ցուցադրական մօտեցում դրսեւորելով, երբ իսկապէս ամէն անգամ հիւանդ այցելուին քննելիս, կարծես գրոց վարելով էր փորձում հիւանդութեան տեղն ու տեսակն իմանալ, ու նոր անցնել օգտակար լինելու...

Անշուշտ նաեւ անսխալ կողմնորոշուելով էր իր անսխալիտական շրջանակից դուրս բուժում նուիրող բժիշկների մօտ ուղարկում... ինչպէս որ էր բանը, երբ այդօրինակ բնոյթի «ուղեգրով»՝ սրտաբան վիրաբուժ Բիլլի կողմից սիրտս վիրահատուելուց ի վեր՝ 18 տարիներ շարունակաբար հետազոտուելիս եւ առողջ վիճակում գտնուելուս համար, երբ տեղեկատուութիւն էր փոխանցուած կենտրոնացուած թերապետ բուժբաժանմունք, արդէն աչքի անցկացող բժիշկ Յակոբ Զաք Սարգսեանի շնորհաւորանքի խօսքի անկեղծութիւնը՝ ընթերցելի գիր էր համարուում...

Եւ ուր որ էր, ասացի, որ շուրջ քսանամեակ էր շրջանցուելու, բայց ի ցաւ՝ ժամանակը կանգ չառնելով հանդերձ՝ յարգուած ու սիրուած մարդու սիրտը կաթուածահարուելու «մեղքով» եղաւ բանը, որ սպասելի չլինելով է անցել՝

յաւիտեանական հանգստի...

Ասել է, թէ արժանաւոր մարդ - բժշկի մահով բաժանուելուց ի վեր, ինչ արած, որ դեռ ես կամ եւ, անշուշտ, ոչ միայն ես...

Եւ ի մխիթարանք ընդունելի աւանդոյթ է, թէ օջախի գենեֆոնդն իր չգրուած ընթերցելի իմաստն է բարբառում, թէ ամենայն ինչ յաջողաբար փոխանցուում է այս բուժարան-տնտեսութեան յարկի տակ: Եւ իրօք, ժամանակը չպաղած՝ մի նոր ազնիւ մարդ-բժիշկ փոխարինողը եղաւ՝ էմմիլ Ովհաննէսը...

Ասել է, թէ այս նոր բժշկի եւ հնուց այցելու հիւանդների միջեւ անծանօթութեան սառնութիւնը չերկարաձգեց: Եղաւ այնպէս, որ այցելուները բուժարան մտնելիս եւ բարեւելիս՝ հետզհետէ առաջինի նկարներին ժպտացող աչքերը բարբառում էին՝ նմանը նմանին է գտնում, վստահելի է, վստահեցեք...

Միայն թէ, չէ, չեմ ասի, թէ ափսոս, երբ էմմիլ Ովհաննէսի աշխատանքային տարին չբոլորուած հրաւիրուեց հիւանդանոցային աշխատանքի...

Եւ այս անգամ մի նորովի մխիթարանք նուիրողը եղաւ՝ առաջինի մերձաւոր ազգական՝ թերապետ բժիշկի օգնական՝ Մանուկ Չուլեանը...

Եւ այս մարդաշեմ-օջախում մի նոր մարասէր բժիշկի օգնական Մանուկ Չուլեանի ընդունելի լինելն, իրօք էլ աւելի բնականոն եղաւ, երբ նախ եւ առաջ՝ բժիշկ Յակոբ Զաք Սարգսեանի մերձաւոր ազգականը լինելով, իրօք ինչպէս վերին ասացի՝ գենը պիտի խօսէր յօգուտ բուժման կարիք ունեցողներին: Այո՛, առաջին իսկ օրերից անսխալ կողմնորոշուելով ջանաց՝ սխալներ թոյլ չտալով առաջանալ եւ անխտիր լինել արժանի փոխարինող...

Ասել է, թէ արժանի փոխարինողի օգնութեան կարիքն ունեցողներից մէկն էլ ես լինելով եմ հաւատում, թէ այս բժշկարանում, անշուշտ, նախապէս ժամադրութեամբ եւ ամէն օր մէկ տասնեակ առանձին ընդունարաններում բժշկական օգնութիւն հայցողներ են: Եւ ասածիս պէս որքան էլ ըստ ժամադրութեան էր բանը, բայց երբ կից սենեակից հրատապ կարիք ունեցողի տնքոցն էր լսում, արդէն բժիշկ Մանուկ Չուլեանը չէր կարող ստանալ հիւանդից թողութիւն չհայցել ու շանցնել միւսին օգնելու...

Ասել է, թէ՛ մարդը վազքի մէջ է...

Ձեռքը մէկ լսողական սարքաւորմանը՝ սրտի զարկերի ռիթմիկութիւնն է լսում, մերթ ժպտում, ուրախանում եւ մերթ էլ՝ խորը հոգոց անելով միտում, բայց անշուշտ հիւանդի կողմից նկատելի չլինելով...

Այո՛, պարտաւոր է երբեմն ինքն իրենից թաքնուել...

Ինչեւէ, այսպէս ազատ ժամ էլ չէ ու վայրկեան չունեցող մարդու ձեռքը, ի գարմանս նաեւ բաներ է գրում՝ դեղատոմսեր, թէ նիւթական ապահովութեան գրութիւններ լրացնում, բայց այդքան բանը պէտք լինելով շտապ չէ, երբ ընդհատում ու նոր թերթիկ է վերցնում...

ԲԱՑԱՌԻԿ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊԱԿՈՒԵՑԱՒ Ս.Դ.Յ.Կ.Ի 125 ԱՄԵԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շաբաթական 1-էն

յիշատակ Հոկտ. 27, 1999ի գոհերուն եւ իրենց կեանքը հայ ժողովուրդին նուիրաբերած նուիրեալներուն: Ապա՝ Հայերէն եւ Անգլերէն լեզուներով անդրադառնալէ ետք 125 տարիներու Հնչակեան կուսակցութեան գործունէութեան, նշեց հետեւեալը. «Եթէ այս գիտաժողովը նպատէ երկարամեայ հայ կազմակերպութեան մը տարիներու գործունէութեան ընդմէջէն, մեր մէջ զօրացնելու մեր հայկական էութեան գիտակցութեան սաղմը, մենք՝ մեծապէս գոհացած պիտի ըլլանք անոր արդիւնքէն»:

Գիտաժողովի բացումին ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Ան բարձր գնահատեց Մայր Կուսակցութեան հիմնադիրներու Հայրենիքին ծառայելու իրենց տեսիլքն ու ուժակները: «Անոնց յիշատակը թող միշտ պայծառ մնայ եւ թող այս իրադրութիւնը՝ նոր աւիւն մը դառնայ նոր սերունդին եւ գեղեցիկ ընծայումն ըլլայ անոնց պայծառ յիշատակին»:

Սրբազանն իր խօսքն աւարտեց «Զգործս ձեռաց մերոց» աղօթքով:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ Ուրուպլըրի Համալսարանի տնօրէն՝ Դոկտ. Տան Սէնթ Գլէր եւ նախագահի անուանով շնորհաւորեց Ս.Դ.Յ.Կ.Ի 125-ամեակը: Ան յայտնեց թէ իրենց համալսարանն ու Հնչակեան Կուսակցութիւնը գրեթէ նոյն տարիքն ունին եւ ուրախութեամբ ընդգծեց որ համալսարանի ուսանողութեան քսան առ հարիւրը հայերէ կը բաղկանան:

Այստեղ կ'ուզենք նշել որ սոյն գիտաժողովի հովանաւորներն էին UCLA համալսարանի Ռիչըրտ Յովհաննիսեանի անուան ժամանակակից Հայոց Պատմութեան ամպիոնը, Ուրուպլըրի համալսարանը, Միչիգըն համալսարանի Հայկական Հետազոտական Կեդրոնը եւ Հայկական Ուսումնասիրութիւններու եւ Հետազոտութեանց Ազգային Ընկերակցութիւնը:

Գիտաժողովը ամբողջովին համակարգչային արդի մեթոտներով եւ արբանիակային հեռափոխով, մատչելի դարձաւ աշխարհի չորս ծագերուն, sdhp125.org հասցեով:

Առաջին նստաշրջանի համադրողն էր փրոֆ. Սեպուհ Ասլանեան: Ելոյթ ունեցան հետեւեալները.

Փրոֆ. Հրաչ Զիլինկիրեան (Լոնտոնէն-ուղղակի եթերով) նիւթ «Կայսրութիւններու անկումէն մինչեւ համաշխարհայնացման դարը. հայկական քաղաքական գաղափարախօսութեան եւ ռազմավարութեան խնդիրներ եւ հարցադրումներ»:

Դոկտ. Աբել Քհնյ. Մանուկեան «ժընեւ եւ Հնչակեան կուսակցութեան ստեղծումը»:

Փրոֆ. Ժիրայր Լիպարիտեան «Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ակունքներուն մօտ. խնդիրներ եւ յարակարծիքներ»:

Երկրորդ նստաշրջանի համադրողն է փրոֆ. Հուրի Պէրպէրեան: Խօսք առին հետեւեալները.

Փրոֆ. Վահրամ Շամմասեան նիւթ «Բացարձակ մենատիրութիւն-Հնչակեան Յեղափոխական Դրուագը 1890-ականներու հայկական Մուսա Լեւի մէջ»:

Դոկտ. Կարապետ Մոմճեան «1895-1914 Հայկական Յեղափոխական եւ քաղաքական կազմակերպութիւններու յարաբերութիւնները Երիտասարդ Թուրքերու հետ»:

Փրոֆ. Գէորգ Պարտազեան «Գաղափարաբանութիւն եւ գրականութիւն. Մայր Կուսակցութիւնը եւ անոր մտաւորական գաւակները»:

Ճաշի դադարէն ետք տեղի ունեցաւ երրորդ նստաշրջանը: Համակարգող՝ փրոֆ. Արա Սանճեան: Զեկոյց տուին հետեւեալները.

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան՝ նիւթ՝ «Հնչակեան Կուսակցութիւնը եւ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը»:

Պրն. Արամ Արքուն «Համաշխարհային Առաջին պատերազմէն ետք Հնչակեան Կուսակցութեան դերը Կիլիկիոյ մէջ»:

Փրոֆ. Արա Տօթուրեան. «ՄԴԿ-ի աշխատակողմնական եւ քաղաքական գործունէութիւնը ԱՄՆի արեւելեան շրջանին մէջ, Հնչակեան Համաշխարհային պարունակին մէջ (1890-2000)»:

Յետ միջօրէի դադարէն ետք չորրորդ նստաշրջանի համակարգողն էր փրոֆ. Ժիրայր Լիպարիտեան: Խօսք առին.

Դոկտ. Վարդան Մարտիրոսեան «Հարաւային Ամերիկայի Հայկական Գաղութներու մէջ Հնչակեան Կուսակցութեան գործունէութիւնը. սղկեանական շրջանի ուրուագիծ մը»:

Փրոֆ. Արա Սանճեան «Խրուչ-չեւը, Ղարաբաղն ու Հնչակեանները. փաստագրական ուղեւորութիւն մը բանաւոր պատմութեան աշխարհի յառաջիկայի մէջ»:

Արդարեւ, վերոյիշեալ, ակաւոր պատմաբանները եւ ակադեմիականները՝ իրենց վերլուծումներով եւ քննարկումներով ՄԴԿ-ի պրիսմակի ընդմէջէն անդրադարձան անցնող 125 տարիներու հայ ժողովուրդի պատմութեան զանազան երեսներուն: Իւրաքանչիւր նստաշրջանի աւարտին՝ ներկաները իրենց շահեկան հարցումներով յաւելեալ լուսաբանութիւններ ստացան արծարծուած նիւթերուն շուրջ:

Գիտաժողովի աւարտին փակման խօսքը կատարեց ՄԴԿ Կեդր. Վարչութեան անդամ ընկ. Տօթ. Համբիկ Սարաֆեան: Ան մասնաւորապէս նշեց որ Կուսակցութիւններու գոյութիւնն անժխտելի է մեր հայ իրակայնութեան մէջ: Անոնք են որ պայքարեցան եւ ազատ անկախ հայրենիք մը ունենալու գաղափարն իրականացուցին: Եթէ ոչինչ ընէինք Թուրքիոյ մէջ, այսօր անհայրենիք պիտի մնայինք այլ ազգերու նման: Որպէս փոքր ժողովուրդ այն իրագործումները որ ցարդ կատարուած են՝ հպարտացուցիչ են եւ ապշեցուցիչ: Իր ելոյթի աւարտին կոչ ուղղեց հայրենիքի աւանդական կուսակցութիւններու վերադառնալ իրենց արմատներուն, քաղաքական եւ գաղափարական շինիչ վերլուծուիւններով իրենց նպատը բերեն բարգաւաճ եւ կենսունակ հայրենիքի մը ստեղծումին:

Խօսք առաւ նաեւ Գերշ. Վաչէ Սրբազան եւ իր երախտագիտութիւնը յայտնեց այս ակադեմիական բարձրորակ միջոցառումին համար: Մաղթեց որ յառաջիկայ տարիներուն եւս նման հանդիպումներ ըլլան քննարկելու համար մեր



եկեղեցին ու նոր սերունդը դիմակալող հարցերը:

Ուշ երեկոյեան, Կլենտէյլի «Ֆէնիչիա» ճաշարանին մէջ, գիտաժողովի կազմակերպիչ յանձնախումբը ճաշկերոյթով մը պատուեց տարբեր շրջաններէ ժամանած հիւր դասախօսներն ու գիտնականները: Այստեղ շնորհակալական խօսքերով հանդէս եկան Լոս Անճելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս

Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Ս.Դ.Յ.Կ. Կեդր. Վարչութեան անդամ՝ ընկ. Տօթ. Համբիկ Սարաֆեան եւ ՆՍՄՄ-ի ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան: Անոնք շնորհաւորեցին իրենց մասնակցողներն ու կազմակերպիչները մաղթեցին նորանոր յաջողութիւններ իրենց յետագայ աշխատանքներուն: Վարձքը կատար բոլորին:

ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ «ՄԻՇՆԵՐԻ ՅԵՐԸՏ»Ի 1915-1918 ԹԹ.

Շաբաթական 15-էն

ՄԱԿԱՆ ԽՈՐՈՒՆԿ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ հայ ներկայ եւ գալիք սերունդներուն համար: Նմանապէս՝ ՀԱՅՈՑ ՅԵՐԱՍՊՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐԱԳԻՏԱԿԱՆ հազուագիւտ մատենա է ան, զոր պատմաբանն ու հետազոտողը կրնան լիովին օգտագործել, կարելի ճշգրտութեամբ կառուցելու համար՝ այս թեմային հետ առնչակից իրենց թէզը: Իսկ հայ հանրութեան համար, ընդհանրապէս, անիկա կրնայ ծառայել

որպէս ՈՒՂԵՆԻՇ ԵՒ ՈՒՂԵՑՈՅՑ՝ իր ազգային-հաւաքական ապագան կերտելու համար:

Երախտարժան այս ազգագուտ ու հայանուէր աշխատութեան համար, մեր խորագրաց շնորհակալութիւնները կը յայտնենք յարգելի Դոկտ. Փրոֆ. Երուանդ Քասաբեկին, իրեն մաղթելով քաջաւորողութիւն, ստեղծագործական բեղուն աշխատանք, անխոնջ եռանդ ու կորով:

ՎԱՐՁՔԻ ԿԱՏԱՐ, ՅԱՐԳԵԼԻ ՄՇԱԿ:

500 ԱՄԵԱԿ ՅԱՅԵՐԵՆ ԳԻՐՔԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Շարունակում է 16-ին

ներն ու զարդերը նման ոճով զարգացնելով: Գործի լծուեցալ իրենց հետ նաև Յովհաննէս անուն նուիրեալ տպագրիչ մը: Աբգար իր կարգին, 1565-ին, վենետիկի մէջ հինգ հայերէն յաւելեալ գիրքեր եւս տպագրեց՝ «Տօնացոյց» մը, «Ժամագիրք» մը, «Մաշտոց» մը, եւ «Քերականութիւն» մը: Ապա իր տպարանը Կ. Պոլիս փոխադրեց, ինք հոն գնաց ու որդին մնաց Հոռոմ, ուր տպագրութեան հայերէն յաւելեալ տառեր պատրաստել տուաւ եւ տպագրեց «Տոմար Գրիգորեան»:

Աբգար 1565 թուականի իր յիշատակարանին մէջ լուեցալ յիշած է Յակոբ Մեղապարտի առաջին գործերը, որոնք օրինակ ծառայած են իրեն յիսուն տարիներ ետք: Ամենայն Հայոց Միջազգէլ Սեբաստացի Կաթողիկոսն էր, որ յատուկ յանձնարարական Կոնդակով մը 1562 թուին Աբգար Գալիքը Հոռոմ ուղարկեց, որ երկար ժամանակ վենետիկ մնաց եւ հայերէն նոր գիրքեր ձուլեց: Իր որդին Սուլթանաշահ իր գործը շարունակեց մինչեւ 16-րդ դարու վերջը:

Ուրեմն Յակոբ Մեղապարտի հնագոյն տպագրութիւններէն մինչեւ Աբգար Գալիք, 1512-1586, մեզի հասած տպագրեալ գիրքերը եղած են 19 գիրք: Ուղիղ յիսնամեակ մը ետք, 1636-ին, Ջուղայի մէջ Խաչատուր Կեսարացին եւ իր օգնականները նոր տպարաններ հաստատեցին եւ չորս գիրքեր եւս տպեցին:

Նոր Ջուղայի Մէջ

1640 թուականէն սկսեալ հայկական տպագրութեան պատմութեան մէջ սկսաւ Նոր Ջուղայի դպրոցը՝ գլխաւորութեամբ Խաչատուր Կեսարացիի որուն աշակերտները տառեր սկսան փորագրել եւ տպարան հիմնել նոյն տարին: Նոր Ջուղայի տպագիր առաջին գիրքը եղաւ «Հարանց Վարք»ը: Խաչատուր Եւրոպայէն օգուտ քաղելով զարգացուց իր տպարանը, նոյնիսկ Սպահան եւս ճիւղ մը հիմնելով ուր որակաւոր գիրքեր լոյս տեսան:

Խաչատուր Կեսարացի Նոր Ջուղայի մէջ տպագրեց չորս գիրք եւս, որոնց կարգին Կիւրեղ Աղեքսանդրացի Հայրապետի քրիստոսաբանական հնագոյն երկը՝ «Պարապմունք Կիւրեղի Աղեքսանդրացու» անուն, որ յետագային անգլերէնի թարգմանուեցաւ անգլիացի հայագէտ Գոնիբերի կողմէ Լոնտոնի մէջ 1907 թուին, եւ վերջերս իմ աւարտածարին նիւթը եղաւ: Կիւրեղ Հայրապետի «Մի բնութիւն Բանին Մարմնացելոյ» բանաձեւը, թէ Քրիստոսի երկու բնութիւնները անշփոթ միացած

են մէկ Անձի եւ մէկ Բնութեան մէջ, Հայրապետը բացատրած է Եփեսոսի 431 թուականի Տիեզերական ժողովին եւ ապա գրած իր «Պարապմունք»ը, շեշտը դնելով ոչ թէ թուական «երկու-բնութեան» վրայ, այլ ներքին օրկանական աղերսով երկու բնութեանց «միութեան» վրայ: Իմ աշխատանքը Արեւմտեան Թեմի կողմէ վերջերս կրկին հրատարակուեցաւ Studies in Armenian Church գիրքին մէջ:

Ոսկան Վարդապետ Երեւանցի

Իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անունով 1658 թուին Յակոբ Ջուղայեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով Ոսկան վարդապետ Երեւանցին Հոլանտայի Ամսդերտամ քաղաքին մէջ հիմնեց Ս. Սարգիս անունով տպարան մը 1664 թուին, եւ առաջին Աստուածաշունչ Մատենան տպագրեց 1666 թուին: Աստուածաշունչի տպագրութեան 300 ամեակը տօնեցինք Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Կոնդակով 1966 թուին, եւ այդ առիթով շատ բովանդակալից եւ գիտական բարձր մակարդակով ճոխ ուսումնասիրութիւններ «ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագրի միացեալ թիւով լոյս տեսան որպէս մնացուցիկ վկայութիւն: Ոսկան յաջորդեց Մատթէոս վարդապետ Ծարեցիին որ Ամսդերտամ մեկնած էր կանուխէն եւ տպարան մը հիմնած 1658 թուին: Ոսկան Լիվոռնոյի եւ Մարսիլիոյ մէջ եւս ծաւալեց իր գործը՝ տպագրելով 17 անուն գիրքեր:

Ոսկան Երեւանցիի հետ աշխատող Մատթէոս Վանանդեցին կը յիշուի որ գործի գլուխ անցնելով 1695-ին Ամսդերտամի մէջ յանուն Մայր Աթոռի տպագրեց «Համատարած Աշխարհացոյց» անուն գիրքը, եւ առաջին անգամ ըլլալով պատմահայր Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւնը», «Դուռն իմաստութեան» դասագիրքը, եւ «Գանձ չափոց, կշռոց, թուոց եւ դրամոց բոլոր աշխարհի» գիրքը:

Ոսկանի ծնողները Ղլիճեց տոհմէն էին, Երեւանցի, Նոր Ջուղայ բռնի գաղթած Շահ Աբբասի կողմէ: Ոսկան ծնած է 1614 թուին Նոր Ջուղայ, եւ իր ծնողաց Երեւանցի անունը ժառանգած: Ուսանած է նախ Ջուղայի մէջ նոր հաստատուած Խաչատուր Կեսարացի վարդապետի կրթարանէն ներս, եւ ապա Էջմիածնի մէջ, դասակից ունենալով Յակոբ Ջուղայեցին, յետագային Կաթողիկոս Ամենայն Հայոց, որմէ Ոսկան եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած է եւ զրկուած Ֆրանսայի Մարսէյլ քաղաքը, ուր տպարան հաստատած է

եւ հոն իր կեանքը կնքած 60 տարեկանին՝ 1674 թուին:

Մարսէյլի մէջ վերջերս յայտնաբերուեցաւ Ոսկան Եպիսկոպոս Երեւանցիի «Վէմքար»ը երբ Երջանկայիշատակ Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս կ'այցելէր ու իր ձեռնադրած եպիսկոպոսը կը հաստատէր որպէս իր եւ Հայ Եկեղեցուց միակ ներկայացուցիչը Մարսիլիոյ մէջ: Երբ Հայրապետը կ'առաջնորդէն շրջանի կաթողիկ վանքը, հոն թանգարանին մէջ ի պահ կը մնար վէմքարը իր հայերէն արձանագրութեամբ: Վէմքարը Ս. Պատարագի մատուցման յատուկ է եւ պէտք է շփոթել դամբանաքարի հետ: Վազգէն Հայրապետ յատուկ «Հոգւոց» արտասանելով վէմքարը փոխադրել կուտար Մարսիլիոյ Ս. Թարգմանչաց մայր եկեղեցի պատուիրելով որ ան հաստատ եւ մնայուն մնար խորանին առջեւ:

Ռաֆայէլ Իշխանեանի գնահատմով «Յակոբ Մեղապարտի հիմնադրած հայկական տպագրութիւնը երկու ու կէս դար օտար երկրներում գարգանալուց յետոյ՝ 1771 թուին Սիմէոն Երեւանցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերով ոտք դրեց հայրենի հողի վրայ, երբ Էջմիածնում սկսեց աշխատիլ Հայաստանի առաջին տպագրական հաստոցը»: Տարի մը ետք առաջին աղօթագիրքը տպուեցաւ Ս. Էջմիածնի մէջ «Զբօսարան Հոգեւոր» անունով: Իսկ Մաղաքիա Պատրիարք Օրման-եանի դատումով «Հայերէն տպագրութեան գիւտը Հայ միաբնակ զարգացման նպաստաւոր փաստ մը եղաւ արեւելքի ազգերուն մէջ ուր Հայք յառաջըն-

թաց գտնուեցան»:

Կ. Պոլսոյ Մէջ

Բնականաբար հայերէն գիրքերու տպագրութիւնը հայկական միջավայրի կարիքը ունէր, որ իսկոյն եղաւ Կ. Պոլիս՝ իբրեւ հայաշատ քաղաք: Գրիգոր Մարգուանցի (1698-1734) հոն հիմնեց իր սեփական տպարանը 1699 թուին՝ Աստուածատուր Դպիրի աշխատակցութեամբ, որոնք հրատարակեցին 20-ի օտ հատորներ 18-րդ դարու արշալոյսին, ինչպէս առաջին անգամ ըլլալով Գրիգոր Նարեկացիի ՆԱՐԵԿ Աղօթամատենան:

Մարգուանցիի հրատարակած տպագրեալ գիրքերուն մէջ յայտնի եղան առաջին «Յայսմաւուրք»ը՝ 1706-ին, Ազաթանգեղոսի «Պատմութիւն»ը՝ 1709-ին, Զենոբ Գլալի «Պատմութիւն Տարօնոյ» գործը 1719-ին, եւ Տաթևացիի «Գիրք Հարցմանց»ը 1720-ին: Ինչպէս կ'երևի հայերէն ձեռագիր մատենաներէն ամենակարեւորները ընտրուելով՝ տպագրութեան կը յանձնուէին Ս. Գիրքէն անմիջապէս ետք:

Յայսմաւուրք կոչուած ժողովածոն սուրբերու կեանքը ներկայացնող օրական ընթերցումներու գիրք մըն է, Նարեկը՝ ամենէն ընտիր աղօթարանն է, Զենոբ Գլալի երկը Ս. Գրիգոր Լուսաւորչի հիմնած առաջին եկեղեցիներէն մէկ ուխտատեղիին պատմագրութիւնն է՝ նուիրուած Յովհաննէս Մկրտչի, եւ կամ Գիրք Հարցմանցը աստուածաբանական կենսական ուղեցոյց մը կամ դասագիրք մըն է Հայ Եկեղեցուց դաւանանքը ուսուցանող:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Շարունակում է 20-ին

խնդրին առնչութեամբ եւ տուաւ որոշ բացատրութիւններ եւ յոյս յայտնեց նաեւ, որ յաջորդ հատորին մէջ արդէն յօդուածներ կ'ըլլան Ջաւախքէն կամ Ջաւախքի մասին: Հոսսկ, ան յանուն Հանդէսի խմբագրակազմին ընդգծեց թէ Հանդէսը հաւաքական յաջողութեան արգասիք է, եւ թէ օղակաւոր շղթային բոլոր օղակներն ալ կարեւոր են եւ որեւէ օղակի տկարութիւն՝ տկարութիւնն է ամբողջ շղթային: Ան մատնանշեց Հանդէսի յաջողութեան մէջ ներկաներուն

գնահատելի դերակատարութիւնը՝ Հանդէսի խմբագրակազմին անունով շնորհակարտելով գիրքնք եւ շնորհակալութիւն յայտնելով անոնց:

Շնորհահանդէսին բաժնուեցան Հայաստանի Հանրապետութեան ԼԲ. հատորի աշխատակիցներու առանձնատիպերը, իսկ շարք մը գրադարաններուն եւ Մաշտոցի անուն Մատենադարանին՝ ԼԲ. հատորը:

Տեղին է յիշել, թէ Դոկտ. Տադէսեան նաեւ հանդիպումներ ունեցաւ Հանդէսի Արցախի աշխատակիցներուն հետ:

REQUEST FOR PROPOSALS (RFP# 7569-A) PROPERTY MANAGEMENT SERVICES
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified, experienced property management companies to perform the management and operation of its Asset Management Portfolio consisting of up to 69 multifamily and senior market rate and multifamily, senior and income-restricted scattered properties which include up to 1,163 units. Copies of the RFP may be obtained beginning October 14, 2012 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd 4th Fl., Los Angeles CA 90057 until 2:00 pm (PST), November 9, 2012.
10/25, 11/1/12
CNS-2393559#
MASSIS WEEKLY

REQUEST FOR PROPOSALS (RFP# 7575) PROGRAM/PROJECT MANAGEMENT SERVICES
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms to perform Program/Project Management services for the planning and administering of its capital improvements and new construction projects.. Copies of the RFP may be obtained beginning October 21, 2012 online at www.hacla.org/ps. Proposals will be accepted until 2:00 pm (PST), November 16, 2012 at 2600 Wilshire Blvd, 4th Floor, Los Angeles CA 90057.
11/1, 11/8/12
CNS-2397089#
MASSIS WEEKLY

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԱՆՆՈՒՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՀՈԳԵՆԱՆՊԻՍ



Հանգուցեալ ՍԱՐԳԻՍ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ մահուան առաջին տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Նոյեմբեր, 2012ին յաւարտ Ս. Պատարագի, Փաստօրինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

- Սգակիրներն են՝
- Այրին Տիկ. Ալիս Մուժաֆեան
- Մայրը՝ Տիկ. Ազնիւ Մուժաֆեան
- Քոյրը՝ Տիկ. Անահիտ Պէրպէրեան
- Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Յովհաննէս եւ Սոնա Գրգոչեան
- Եղբայրը՝ Տիար Մինաս Մուժաֆեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Լիսա Մուժաֆեան
- Հօրեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Պօղոս եւ Ազատուհի Մուժաֆեան
- Հօրաքոյրը՝ Տիկ. Մարի Գալթաքեան
- Հօրաքոյրը՝ Տիկ. Զապէլ Մարաֆեան
- Մօրաքոյրը՝ Տիկ. Մարիամ Քազէզեան
- Մօրեղբայրը՝ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ալտա Ռէճէպեան
- եւ համայն Մուժաֆեան, Եահիւնեան, Թոքեան, Գալթաքեան, Մարաֆեան, Ռէճէպեան, Քազէզեան, Պէրպէրեան, Գրգոչարեան, Քանաքուրեան, Մանուկեան, Մարգումանեան, Եփրեմեան, Թաշճեան, Էլվուտ, Արապաճեան, Ժամկոչեան, Արվանիթովուրուս եւ Տէշօղլեան ընտանիքները:

ՄԱՐԴԱՍԵՐ ՄԱՐԴԸ

Շարունակուած էջ 20-էն

նում, լրացնում ու մեկնում վայրկեան առաջ քննուած հիւանդին՝ խնդրում շտապի ունեզն նկարահանման ներկայանալ...

Եւ չբարձրաձայնելով իսկ չի կարող ինքն իր հետ չխօսել, չասել, թէ շտապ պէտք է, որ նկարահանուածից ելնելով անսխալ կողմնորոշուել...

Ու վերստին այսօր նաեւ ես եմ եկել «պահանջներ» ներկայացնելու, բայց պիտի ասեմ, որ միշտ էլ համբերող լինելով եմ անտրտուն յայտարարում եմ հերթին, երբ իսկապէս չեմ կարող այսօրինակ բազմազբաղ բժշկներին նաեւ բժիշկի օգնական՝ Մանուկ Չուլեանին չկարեկցել ու հենց չկարեկցել...

Այո՛, չեմ ասում ի գարմանս, երբ անտեղի կը լինի, երբ ինձ թողած բժշկին եմ կարեկցում...

Այ քեզ ծանրաբեռնուածութիւն...

Ինչպէ՞ս է դիմանում...

Եւ դեռ յետոյ էլ ոմանք ասում են, թէ ինչ կայ որ...

Հեշտ ու հանգիստ աշխատանք է...

Եւ այդ դէպքում, երբ շատ բժիշկներ, իրօք հերթափոխի աւարտից յետոյ էլ՝ տուն դառնալով «ներկայ» չեն գրուում... Երբ հերթափոխն անցած լինելով հանդերձ օրուայ հոգսերից չեն թօթափուում եւ անխորտակ անդրադարձը կայ, որ ինչ է վաղը մի նոր ճամբարոյս փոխել հիւանդ մարդու ճամբի վրայ...

Արդ, գալով բուժարան այցելողներին մէկն էլ ես լինելով ասեմ, թէ վերջերս՝ թուում է հիւանդ չլինելով եմ հիւանդ ձեւանում, որ

ինչ է թէ՛ այս «տունը» մտնելիս՝ վերստին խնկարկեմ անցնող մարդու կենդանութեան վկայագիր յիշատակարանը...

Այո՛, պատերն ի կախ լուսանկարներից սփռուած ժպիտները նոյնպէս վկայագիր են մնում, որ նաեւ այս պահին վկայեմ, թէ սոսկ աջ թիակիս փոքր ինչ ցաւելը չէ, որ ասածիս պէս նաեւ այսօր է ինձ բերել՝ քուն չդրած յուշերապահ այս «բուժարան-տունը»...

Ասել է, թէ այս «տուն» մտնող ելնողներից դժգոհ մնացող մէկն ու մէկին չեմ առնչուել...

Իսկապէս էլ ի՞նչ չէն «տուն», որ յոյս սնողները քիչ լինեն...

Ուրեմն եւ ասացի, որ շատ թեթեւակի աջ թիակս է առել ցաւեր, բայց ասածիս պէս թեթեւ լինելով հանդերձ՝ ձեռքս այդ հատուածին չի հասնում, որ մի լաւ տրորելու գնով ցաւը տանեմ տրոհելու գնով չնեղուելու: Ինչեւէ, արդէն տեղը-տեղին քննուել եմ, ապահովուել, բայց դրանից վեր էր բանը, երբ վերստին առիթ եղաւ առաջինին անդրադառնալ, յիշել, յիշեցինք եւ ինչ արած պիտի ասեմ, որ Մանուկ Չուլեանի աչքերը թրջուել էին...

Օրեր առաջ էր բանը...

Իսկ այս պահին, դեհ փոխարինող նոր թերապեւտ բժիշկի թոյլտուութեամբ բուժ աշխատակից եւ միաժամանակ կնոջս եղբօր աղջիկ՝ Մելանիա Խոջամիրեանը հրաւիրեց էլեկտրամասսժի...

Եւ այ, երբեմնի իմ անցեալ օրերի թոռուացող երեխան արդէն 60 տարիներ է շրջանցել ու մէկն էլ ինքն է վկայում, թէ գարմանալի ուրախութիւններով լի է կեանքը...

Անշուշտ տխրութիւններով

ՊԱՏԻՍ ԱՐԺԱՆԱԻՈՐԱՑ

Շարունակուած էջ 18-էն

վա Յակոբեան, որ մեծարուեցաւ գեղեցիկ ծաղկեփունջով մը: Յոտնկայս ծափահարութիւններէն ետք, խօսափողին մօտեցաւ Ասպետ Փողարեան (1980), որ իր ուսուցիչին - «երկրորդ ծնող, երբեմն նոյնիսկ առաջին» - ուղղած հակիրճ սրտի խօսքէն վերջ ներկայ ու բացակայ իր բոլոր դասընկերներուն անունով ողջագուրուեցաւ անոր հետ: Յաջորդեց ցուցադրութիւնը կարճ ժապաւէնի մը, Յակոբեաններու տարբեր հանգրուանները ներկայացնող, պատրաստուած կարէն Աւետիքեանի (1976) եւ Միքայէլ Նահապետի (1974) կողմէ:

Հուսկ, խօսքը տրուեցաւ մեծարեալին: «1950, 60-ական թուականներուն», ըսաւ ան, «երբ չկային այսօրուան թեքնոլոգիական գարգացումները, աշակերտներուն գրագումներն էին մարզական, երաժշտական, արուեստի եւ մշակոյթի այլ բնագաւառներու առնչուող գործունէութիւններ ... մանաւանդ գրական, պատմական ու այլ գիրքերու ընթերցում»: Անդրադառնալով այդ ընթերցումի առարկայ գիրքերէն Անդրանիկ Ծառուկեանի «Մանկութիւն Չունեցող Մարդիկ»ի «Եթէ տրուէր ...» վերնագիրը կրող նախաբանին, պ. Յակոբեան ըսաւ «Այսօր, եթէ նոյն հարցը տրուէր ինձի, շատ դժուար պիտի ըլլար որոշել, թէ ո՞ր մէկ օրը պիտի ուզէի վերապրիլ: Խոկումներս պիտի դեգերէին մանկութենէս մինչեւ հասուն տարիքիս այսօրուան հանգրուանը ... ձիպէյլի թուչնոց Բոյնի մեծ ընտանիքին մէջ, ուր հաստատուած եղբայրական ամուր կապերը աւելի քան 60-65 տարիներէ ի վեր տակաւին կը մնան անքակտելի ... Պէյրութ, 1962-ի դպրոցական վերամուտի օրերուն, երբ չորս ընկերներով միասին, բոլորս ալ տակաւին համալսարանի ուսանողներ պաշտօնի հրաւիրուեցանք ծառայելու որպէս ուսուցիչ Արմէն Ղարիպի «Նոր Բարձրագոյն Վարժարան»էն ներս: Արդարեւ, Պրն. Յակոբ Յակոբեան, Պրն. Յարութիւն Արսէն, Պրն. Վարդան Թաշճեան եւ այս սողերը կարգացող մեր ուսուցչական առաջին փորձառութիւնը ստացանք այդ դպրոցի համեստ պայմաններուն մէջ: ... Կիպրոս, 1967-ի դպրոցական վերամուտի օրերուն, երբ կը վերադառնաւ Մելանեան Կրթական Հաստատութիւն, բայց այս անգամ որպէս ուսուցիչ: ... Ի վերջոյ Մելանեանի մէջ էր, որ հանդիպեցայ Սիլ-

վային: Հոն էր, ուր կազմեցինք մեր ընտանեկան բոյնը ... ուր լսեցինք մեր գաւազներուն առաջին ճիշդերը ... 1981-ին Կիպրոսէն Ամերիկա փոխադրուելէ ետք Մելանեան Սանուցը եղաւ մեր երկրորդ ընտանիքը ... բոլորս կը հաւատայինք, եւ մինչեւ այսօր շատերս տակաւին կը հաւատանք, որ Մելանեանը պէտք էր կանգուն պահուէր եւ տրուէր անոր առիթը՝ շարունակելու իր սրբազան առաքելութիւնը որպէս հայեցի դաստիարակութեան դարբնոց եւ որակաւոր ուսման լուսոյ վառարան: ... Ուսուցչական ծառայութեան անհամար օրերը, որոնք անցուցի վերջին 30 տարիներու ընթացքին ... Այսօր հարուստ կը զգամ ինքզինքս, որ Մելանեանի եւ միւս վարժարաններու երբեմնի աշակերտներս - պատուաբեր դիրքերու հասած որպէս բժիշկ, ճարտարագէտ, ուսուցիչ, համալսարանի փրոֆեսոր, դեղագործ, իրաւաբան, տնտեսագէտ, գիտնական - իմ բարեկամներս են արդէն»:

Պրն. Յակոբեան աւարտեց իր խօսքը խորին շնորհակալութիւններ յայտնելով երեկոն կազմակերպող Սանուցի վարչութեան, ժապաւէնը պատրաստողներուն, յայտագրին մաս կազմողներուն, մասնաւորաբար Վարդգէս Գուրուեանին, ներկաներուն, իր երբեմնի բոլոր պաշտօնակիցներուն եւ բոլոր աշակերտներուն, «որոնց որպէս ուսուցիչ ծառայելու հաճոյքը, պատիւը եւ առանձնաշնորհումը ունեցայ», տիկնոջ՝ Սիլվային, «որ աւելի քան 40 տարիներ սիրով եւ համբերութեամբ գիտ գտաւ գրասեղանիս առջեւ, կլանուած դպրոցական գործերով ... Ինք էր, որ հոգածութիւն ու սէր գուցաբերեց մեր գաւազներուն ...» Ան երախտագիտութեամբ չի շեղ մօրը, քրոջը եւ քեռայրին, Ամերիկայի մէջ իրենց կեցութիւնը քաղցրացնող մանկութեան ընկերներուն:

Յոտնկայս ծափահարութիւններէ վերջ, բոլորը շրջապատեցին մեծարեալը, շնորհաւորելու եւ խումբ-խումբ հետը նկարուելու համար: Աշխոյժ երաժշտութիւնը ներկաները հրաւիրեց պարելու:

Յաջող ձեռնարկ մըն էր: Վայրը հաճելի, ուտելիքը ընտիր, մթնոլորտը ջերմ, սիրտ յագեցնող: Ապրին կազմակերպողները:

Ձեր վարձքը կատար, պարոն Յակոբեան: Վարձքը կատար սերունդ կերտող մեր բոլոր ուսուցիչներուն, դաստիարակներուն, երկրորդ ծնողներուն:

նոյնպէս...

Եւ ո՛չ ես, ո՛չ էլ մէկ ուրիշը կարող է ինչ-ինչ բաներ փոխել, կամ թէկուզ քիչ առաւել չափով նժարի սլաքը թեքել մարդու օգտին տարուբերութեամբ...

Ինչպէս որ ասացի, թէ երբեմնի կչկչոցով ծիծաղող Մելանիա Խոջամիրեանը, իրօք 84 տարեկանում լինելս իսկի նկատի չունենալով է քմծիծաղելով «հրամայում» մէջքս բացեմ ու կրծքավանդակով հակուեմ «մահճակալի» բարձին...

-Քանի՞ րոպէ է տեւելու, - հարցնում եմ յուսահատ:

-Շատ չի, ընդամենը 15 րոպէ:

-Շատ չի, -հեզմանքով եմ վրայ բերում, բայց նա, նախ չորս կպուկները միացրեց, որ թիակս

չորս տեղերից իրենց ծակծկոցների գործընթացին անցնեն...

Միայն թէ ինձ մօտիկից ճանաչելով շտապ գնաց ու մի քանի սպիտակ թուղթ, գրիչն էլ հետը բերեց ու դրեց դոշիս դիմաց...

-Խնդրեմ, գրիւր, որ յանկարծ փշրանքներով իսկ ժամանակ չկորցնես, -ասաց, ժպտաց եւ թուաց, թէ երբեմնի աղջիկ երեխային նմանուել-չնմանուելով, բայց արդէն հասուն մարդու բարեհաճ մօտեցմամբ՝ աւարտն ազդարարող զանգակն ի ցոյց արեց ու ինձ մենակ թողեց...

Ու ինձ մնաց, կամ ինձ թողեց՝ վերադառնամ ինձ մօտ եւ այս նորովի 15 րոպէներում սեւագրուած յուշը՝ հոգեւին ապրեցնելու պահոց յուշամատեան տանել...

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

125 Վեժակ

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեամբ՝

Ս.Դ.Հ.Կ. 125 Ամեակի Յոբելիանական Մարմնի

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ՅԱՏՈՒԿ ՅԱՅՏԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹ ՅԱԿՈՐԵԱՆ • ԱՌՆՕ ՄԿՐՏՉԵԱՆ • ՇԻՐԱԶ
ԷԼՍԻ ՓԷՐԼԻՎԱՆԵԱՆ • ԱՆԻ ԵՓՐԵՄԵԱՆ
ԼԻԼԻԱ ՊԱՐԱԽՈՒՄԲ



Կիրակի, 18 Նոյեմբեր 2012 • Երեկոյեան ժամը 5:00-ին

Glendale High School-ի հանդիսասրահէն ներս՝

1440 E. Broadway, Glendale, CA 91205

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ